

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՏԵԴԵԿԱԳԻՐ ИЗВЕСТИЯ

НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ И

НАЦИОНАЛЬНОГО ПОЛИТЕХНИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА
АРМЕНИИ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐԻԱ

СЕРИЯ ТЕХНИЧЕСКИХ НАУК

ԵՐԵՎԱՆ

ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐԻԱ

Հատոր 75

N 2

ԱՊՐԻԼ – ՀՈՒՆԻՍ

ԵՐԵՎԱՆ 2022

ИЗВЕСТИЯ

НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ И
НАЦИОНАЛЬНОГО ПОЛИТЕХНИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА
АРМЕНИИ

СЕРИЯ ТЕХНИЧЕСКИХ НАУК

Том 75

N 2

АПРЕЛЬ – ИЮНЬ

ЕРЕВАН 2022

PROCEEDINGS

OF THE REPUBLIC OF ARMENIA NATIONAL ACADEMY OF
SCIENCES AND NATIONAL POLYTECHNIC UNIVERSITY OF
ARMENIA

SERIES OF TECHNICAL SCIENCES

Volume 75

N 2

APRIL - JUNE

YEREVAN 2022

Журнал издается с 5.01.1948 г.

Выходит 4 раза в год

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Գլխավոր խմբագիր՝ Մելիքյան Վ.Շ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ Գրիգորյան Ա.Խ., տ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Պատասխանատու քարտուղար՝ Մեյրանյան Ժ.Ս., ՀՀ
Խմբագրական կոլեգիա՝
Աղբալյան Ս.Գ., տ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Ասլանյան Լ.Հ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ֆ.-մ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Բաղդասարյան Ն.Պ., տ.գ.դ., պրոֆ., ՌԴ
Բաղդասարյան Հ.Վ., տ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Բաղդասարյան Ս.Ք., տ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Գագարինսկի Ա.Յու., ֆ.-մ.գ.դ., պրոֆ., ՌԴ
Գոնեւմա Ս., տ.գ.թ., Եգիպտոս
Գրիմբլաթ Վ., տ.գ.թ., Չիլի
Դոկիչ Բ., տ.գ.դ., Բոսնիա և Հերցեգովինա
Ջորյան Ե., տ.գ.թ., ԱՄՆ
Իյուշենկո Ա.Ֆ., Բելառուսի ԳԱԱ թղթ. անդամ, տ.գ.դ., պրոֆ., Բելառուս
Լան Զ., տ.գ.թ., Չինաստան
Կրասնիկով Գ.Յ., ՌԴ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆ., ՌԴ
Կուրտուա Բ., տ.գ.թ., Ֆրանսիա
Հախումյան Ա.Ա., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ֆ.-մ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Հակոբյան Վ.Ն., ֆ.-մ.գ.դ., ՀՀ
Հահանով Վ.Ի., Կիրառական ռադիոէլեկտրոնիկայի Ուկրաինայի ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆ.,
Ուկրաինա
Ղույան Ա.Գ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆ.-մ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Մանդալիկա Ս., տ.գ.թ., Հնդկաստան
Մարուխյան Ռ.Զ., տ.գ.թ., պրոֆ., ՀՀ
Միխայլենիչ Ա.Ա., տ.գ.դ., պրոֆ., Բելառուս
Շիխտման Ու., տ.գ.թ., Գերմանիա
Չանգ Ֆ., Թայվանի ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., Թայվան
Չապլիգին Յու.Ա., ՌԴ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆ., ՌԴ
Պետրոսյան Օ.Հ., տ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Պետրոսյանց Կ.Օ., տ.գ.դ., պրոֆ., ՌԴ
Սապատնեկար Ս., տ.գ.թ., ԱՄՆ
Մարգարյան Յու.Լ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Սքիտնև Ս.Ա., տ.գ.դ., պրոֆ., ՌԴ
Միմոնյան Ս.Հ., տ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Ստեմպկովսկի Ա.Լ., ՌԴ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆ., ՌԴ
Վորոբյով Ա.Ե., տ.գ.դ., պրոֆ., ՌԴ
Տիխոմիրով Գ.Վ., ֆ.-մ.գ.դ., ՌԴ
Ցանովա Ս., տ.գ.թ., Բուլղարիա
Ուբար Բ., Էստոնիայի ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆ., Էստոնիա
Ուսանով Վ.Ի., տ.գ.դ., պրոֆ., ՌԴ

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Главный редактор Меликян В.Ш., член-корр. НАН РА, д.т.н., проф., Армения

Заместитель главного редактора Григорян А.Х., д.т.н., проф., Армения

Ответственный секретарь Сейранян Ж.С., Армения

Редколлегия:

Агбалян С.Г., д.т.н., проф., Армения

Акопян В.Н., д.ф.-м.н., Армения

Асланиян Л.А., член-корр. НАН РА, д.ф.-м.н., проф., Армения

Ахумян А.А., член-корр. НАН РА, д.ф.-м.н., проф., Армения

Багдасарян М.К., д.т.н., проф., Армения

Багдасарян О.В., д.т.н., проф., Армения

Бадалян Н.П., д.т.н., проф., Россия

Воробьев А.Е., д.т.н., проф., Россия

Гагаринский А.Ю., д.ф.-м.н., проф., Россия

Гонейма М., к.т.н., Египет

Гримблат В., к.т.н., Чили

Гулян А.Г., академик НАН РА, д.ф.-м.н., проф., Армения

Докич Б., д.т.н., Босния и Герцеговина

Зорян Е., к.т.н., США

Ильющенко А.Ф., член-корр. НАН Беларуси, д.т.н., проф., Беларусь

Красников Г.Я., академик РАН, д.т.н., проф., Россия

Куртуа Б., к.т.н., Франция

Лан Ч., к.т.н., Китай

Мандалика С., к.т.н., Индия

Марухян В.З., к.т.н., проф., Армения

Михайлович А.А., д.т.н., проф., Беларусь

Петросян О.А., д.т.н., проф., Армения

Петросянц К.О., д.т.н., проф., Россия

Сапатнекар С., к.т.н., США

Саркисян Ю.Л., академик НАН РА, д.т.н., проф., Армения

Сбитнев С.А., д.т.н., проф., Россия

Симонян С.О., д.т.н., проф., Армения

Стемпковский А.Л., академик РАН, д.т.н., проф., Россия

Тихомиров Г.В., д.ф.-м.н., Россия

Убар Р., академик НАН Эстонии, д.т.н., проф., Эстония

Усанов В.И., д.т.н., проф., Россия

Хаханов В.И., академик Академии наук Украины по прикладной радиоэлектронике, д.т.н., проф., Украина

Цанова С., к.т.н., Болгария

Чанг Ф., академик Национальной академии Тайваня, д.т.н., Тайвань

Чаплыгин Ю.А., академик РАН, д.т.н., проф., Россия

Шлихтманн У., к.т.н., Германия

EDITORIAL BOARD

Editor-in-Chief: Melikyan V.Sh., Corr.member of NAS RA, Sci.Dr., Prof., Armenia
Deputy Editor-in-Chief: Grigoryan A.Kh., Sci.Dr., Prof., Armenia
Executive Secretary: Seyranyan Zh.S., Armenia
Editorial Board:
Aghbalyan S.G., Sci.Dr., Prof., Armenia
Aslanyan L.H., Corr.member of NAS RA, Sci.Dr., Prof., Armenia
Badalyan N.P., Sci.Dr., Prof., Russia
Baghdasaryan H.V., Sci.Dr., Prof., Armenia
Baghdasaryan M.Q., Sci.Dr., Prof., Armenia
Chang F., Member of National Academy of Taiwan, Sci.Dr., Taiwan
Chaplygin Yu.A., Academician of RAS, Sci.Dr., Prof., Russia
Courtois B., Ph.D., France
Dokic B., Sci.Dr., Bosnia and Herzegovina
Gagarinski A.Yu., Sci.Dr., Prof., Russia
Ghoneima M., Ph.Dr., Egypt
Ghulyan A.G., Academician of NAS RA, Sci.Dr., Prof., Armenia
Grimblatt V., Ph.Dr., Chile
Hahanov V.I., Academician of Academy of Sciences of Ukraine in Applied Radioelectronics, Sci.Dr., Prof., Ukraine
Hakhumyan A.A., Corr.member of NAS RA, Sci.Dr., Prof., Armenia
Hakobyan V.N., Sci.Dr., Armenia
Ilyushenko A.F., Corr.member of NAS of Belarus, Sci.Dr., Prof., Belarus
Krasnikov G.Y., Academician of RAS, Sci.Dr., Prof., Russia
Lan Ch., Ph.Dr., China
Mandalika S., Ph.Dr., India
Marukhyan V.Z., Ph.Dr., Prof., Armenia
Mikhaylevich A.A., Sci.Dr., Prof., Belarus
Petrosyan O.H., Sci.Dr., Prof., Armenia
Petrosyants K.O., Sci.Dr., Prof., Russia
Sapatnekar S., Ph.Dr., USA
Sargsyan Yu.L., Academician of NAS RA, Sci.Dr., Prof., Armenia
Sbitnev S.A., Sci.Dr., Prof., Russia
Schlichtmann U., Ph.Dr., Germany
Simonyan S.H., Sci.Dr., Prof., Armenia
Stempkovski A.L., Academician of RAS, Sci.Dr., Prof., Russia
Tikhomirov G.V., Sci.Dr., Russia
Tsanova S., Sci.Dr., Bulgaria
Ubar R., Academician of Academy of Sciences of Estonia, Sci.Dr., Prof., Estonia
Usanov V.I., Sci.Dr., Prof., Russia
Vorobyov A.Y., Sci.Dr., Prof., Russia
Zorian Y., Ph.Dr., USA

Հրատ. խմբագիր՝

Խմբագիրներ՝

Ժ.Ս. ՄԵՅՐԱՆՅԱՆ

Հ.Ց. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հ.Զ. ՂԱԶԱՐՅԱՆ

© Издательство НПУА

Известия НАН РА и НПУА (сер. Техн. наук), 2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐԻԱ

ИЗВЕСТИЯ

НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ И НАЦИОНАЛЬНОГО
ПОЛИТЕХНИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА АРМЕНИИ

СЕРИЯ ТЕХНИЧЕСКИХ НАУК

PROCEEDINGS

OF THE REPUBLIC OF ARMENIA NATIONAL ACADEMY OF SCIENCES AND
NATIONAL POLYTECHNIC UNIVERSITY OF ARMENIA

SERIES OF TECHNICAL SCIENCES

2022

2

ՀԱՏՈՐ

ТОМ 75
VOLUME

ԱՊՐԻԼ – ՀՈՒՆԻՍ

АПРЕЛЬ – ИЮНЬ
APRIL - JUNE

Հրատ. Խմբագիր՝
Խմբագիրներ՝

ԺԱՆՆԱ Ս. ՄԵՅԴԱՆՅԱՆ
Հ.Ց. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Հ.Զ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ստորագրված է տպագրության՝ 18.11.2022

Թուղթը՝ «օֆսեթ»։ Տպագրությունը՝ դիզոն: Ֆորմատ՝ (70×100) 1/16:

Շարվածքը՝ համակարգչային:

Տառատեսակը՝ Sylfaen, Times New Roman: 10 տպ. մամ.:

Պատվեր՝ 268: Տպաքանակ՝ 200

Հայաստանի Ազգային
Պոլիտեխնիկական
Համալսարանի
«Պոլիտեխնիկ»

տպագրահրատարակչություն
Երևան, Տերյան 105

Типографско-
издательский центр
«Политехник»
Национального
политехнического
университета Армении
Ереван, ул. Теряна 105,

“Polytechnic” Publishing – House
National Polytechnic University of
Armenia
105 Teryan str. Yerevan

polytechpolygraph@gmail.com

A.A. BABAYAN

STUDYING THE EXTRUSION PROCESS OF A SINTERED THIN-WALL PIPE LOADED WITH INTERNAL HIGH PRESSURE IN CASE OF A BOUNDARY CONDITION IN THE DIE INLET

An analytical study of the process of sintered thin-wall pipe extrusion loaded with internal high pressure, on its cross section in the conical die inlet by compressing meridional dimensionless stress has been carried out. It is assumed that the external die pressure p_v and the internal high pressure p_r acting on the pipe are equal. In this case, the circumferential stress is determined and a simplified plasticity condition is obtained. The dimensionless values of meridional, circumferential and average stresses depending on the degree of pipe deformation were determined, which made it possible to study the processes of their compaction using the DTPPM equations at different values of coefficients of friction and initial porosities of the pipe material.

A computer simulation of the process was carried out in the MS EXEL software environment, presetting different initial values of the compressive meridional dimensionless stress. The pipe extrusion process will correspond to such an initial value of this stress, when the meridional stress of the pipe in the outlet of the die is equal to zero. In this case, the value of strain intensities is $\varepsilon_i = 0.258$.

The graphs of changes in 10, 20 and 30% of the initial porosities of the material show that the porosity becomes zero in the interval of value of deformation intensities ε_i from 0.116 to 0.132, and also in the case of large values of porosities and contact friction, the compaction of the material occurs more intensively.

Keywords: thin-walled pipe, extrusion, boundary condition, circumferential stress, sintered material, computer simulation.

Introduction. Works [1, 2] are devoted to the study of the forming processes of thin-walled pipes made of rigid-strengthening solid materials using the Huber-Mises plasticity condition in the presence of contact friction. Moreover, in [2], the problem of the stress-strain state (SSS) at the extrusion of a non-porous pipe is solved in case of loading it with an internal pressure p_r , and the sintered pipe formation in conical dies is carried out in the absence of the internal pressure. In this case, based on the equations of the flow theory of porous materials (TFPM), the solutions of the problems of plastic deformation in a conical die of sintered monometallic thin-walled pipes of various porosities are given.

It should be noted that the solutions to these problems, which are of great practical importance, are quite complicated, since they are based on the integration of a system of four differential equations.

In [3], a computer simulation of extrusion processes in a conical die of bimetallic rods and pipes made of non-strengthened solid materials with different yield strengths of their inner layers (rod and pipe) has been carried out. Types of Mises stress zones and SSS components have been obtained for different large values of the numerical data of the yield strengths of the inner rod and pipe, which differ from each other.

The analysis of the radial σ_r and the circumferential σ_θ stresses arising due to internal pressure on the outer pipe for bimetallic rods show that in the case of large yield strengths of the inner rod exceeding the yield strength of the outer pipe, the difference in the values of the outer pipe stresses (σ_r and σ_θ) is insignificant.

Based on the obtained stress zones σ_r and σ_θ , it is assumed that the pressures p_v and p_r , acting on the outer pipe are equal, i.e. $p_v \cong p_r$, where p_v is the die pressure on the pipe in the normal direction. In this case, the circumferential tension of the outer pipe $\sigma_\theta = -p_v = -p_r$ is determined, as a result of which a simplified plasticity condition is obtained, and then the SSS of the outer pipe is investigated by the analytical method.

Taking into account the influence of high internal pressure p_r , in the presence of contact friction [3], when tangential stresses $p_m = fp_v$, are formed on the pipe surface in the meridional direction, equilibrium equations [2] are given for solving the problems of plastic deformation of the pipe at a constant thickness of its wall ($h = \text{const}$), where f is the coefficient of friction. In this case, the plasticity condition is expressed through the absolute values of the stressed state components and is simplified by the analytical method of solving problems. The only resulting differential equation is solved using the boundary condition in the outlet of the conical die (the absence of meridional stresses). However, it is impossible to solve the problems of pressing bimetallic pipes in a conical die by this method. Consequently, works in this direction are topical.

The purpose of this work is to solve the problem of pressing a thin-wall pipe loaded with internal high pressure using the boundary condition in the inlet of a conical die by the analytical method.

Solutions to the problem of extrusion of thin-walled pipes loaded with internal high pressure. For this purpose, the equilibrium equations are used and, for plastic materials, the Huber-Mises plasticity condition, which is more precise, but rather complex one, takes into account the volumetric stress state [1, 2]:

Due to the complexity of the problem, as in [1,2], we will assume that the pressures p_v and p_r acting on the pipe are equal, that is, $p_v = p_r$. In this case, for the circumferential stress σ_θ we obtain:

$$\sigma_\theta = -p_v = -p_r. \quad (1)$$

When extruding the pipes loaded with internal high pressure, the main stresses σ_1, σ_2 and σ_3 will be as follows:

$$\sigma_1 = \sigma_m < 0, \sigma_2 = \sigma_3 = \sigma_\theta = -p_v = -p_r < 0, \quad (2)$$

consider that the Huber-Mises plasticity condition (PC) will look as follows:

$$\sigma_m - \sigma_\theta = \sigma_T, \quad (3)$$

where σ_m is the meridional stress and σ_T - the yield point.

Solving the basic equilibrium equation [2]

$$\frac{d}{dr}(\sigma_m r) - \sigma_\theta + \frac{2p_m}{\sin 2\alpha} = 0$$

with plasticity condition (3), we obtain formulas for determining the SSS components of thin-wall pipes during extrusion in a conical die. In the presence of friction ($f \neq 0$), i.e. $p_m = fp_v$, equations of equilibrium and PC for solving the problem in dimensionless stresses $\bar{\sigma}_m$ and $\bar{\sigma}_\theta$ will have the following form:

$$r \frac{d\bar{\sigma}_m}{dr} + \bar{\sigma}_m - \bar{\sigma}_\theta(1 + k) = 0, \quad (4)$$

$$\bar{\sigma}_\theta = \bar{\sigma}_m - 1, \quad (5)$$

where $k = 2f/\sin 2\varphi$,

$$\bar{\sigma}_m = \sigma_m/\sigma_T \text{ and } \bar{\sigma}_\theta = \sigma_\theta/\sigma_T. \quad (6)$$

It should be noted that having the values of dimensionless stresses and yield strengths of materials from (6), we can determine the following formulas for true stresses σ_m and σ_θ , which are of great practical importance:

$$\sigma_m = \bar{\sigma}_m \sigma_T, \sigma_\theta = \bar{\sigma}_\theta \sigma_T. \quad (7)$$

From the PC (5), substituting the value $\bar{\sigma}_\theta$ into the equilibrium equation (4) [2], and transforming it stepwise, we establish:

$$r \frac{d\bar{\sigma}_m}{dr} + \bar{\sigma}_m - (1 + k)(\bar{\sigma}_m - 1) = 0, d\bar{\sigma}_m = \frac{dr}{r}(\bar{\sigma}_m k - (1 + k)),$$

$$\frac{d\bar{\sigma}_m}{\bar{\sigma}_m k - (1 + k)} = -\frac{dr}{r}, \frac{d(\bar{\sigma}_m k - (1 + k))}{\bar{\sigma}_m k - (1 + k)} = k \frac{dr}{r}. \quad (8)$$

By integrating this differential equation, we obtain:

$$\ln(\bar{\sigma}_m k - (1 + k)) = k \ln r + \ln C. \quad (9)$$

To determine the integration constant C , we first transform (9) to the following form:

$$\ln[\bar{\sigma}_m k - (1 + k)] = \ln(r^k C), \quad (10)$$

and then the boundary condition is used.

The boundary condition for pipe extrusion according to the scheme in Fig. 1 when it enters the die has the following form:
when

$$r = r_0, \bar{\sigma}_m = \bar{\sigma}_{m0}, \quad (11)$$

which allows to determine C from (10):

$$C = \frac{[\bar{\sigma}_{m0} k - (1 + k)]}{r_0^k},$$

and then, putting it into (9), transforming it stepwise, we obtain a formula for determining the meridional stress $\bar{\sigma}_m$:

$$\begin{aligned} \ln[\bar{\sigma}_m k - (1 + k)] &= \ln, \\ \{[\bar{\sigma}_{m0} k - (1 + k)](r/r_0)^k\}, \\ \bar{\sigma}_m k - (1 + k) &= [\bar{\sigma}_{m0} k - (1 + k)](r/r_0)^k, \\ \bar{\sigma}_m k &= (1 + k) + [\bar{\sigma}_{m0} k - (1 + k)](r/r_0)^k, \\ \bar{\sigma}_m &= \frac{1+k}{k} + \left(\bar{\sigma}_{m0} - \frac{1+k}{k}\right)(r/r_0)^k. \end{aligned} \quad (12)$$




Fig. 1. The scheme of thin-walled pipe extrusion

For circumferential $\bar{\sigma}_{\theta 2}$ and for the compaction of sintered tube materials, which is of great importance, the average $\bar{\sigma}_0 = (\bar{\sigma}_1 + \bar{\sigma}_2 + \bar{\sigma}_3)/3$ dimensionless stresses are determined by using formulas (1), (3) and (12):

$$\bar{\sigma}_\theta = -\bar{p}_v = \bar{\sigma}_m - 1 = -1 + \frac{1+k}{k} + \left(\bar{\sigma}_{m0} - \frac{1+k}{k}\right)(r/r_0)^k,$$

$$\bar{\sigma}_\theta = \frac{1}{k} + \left(\bar{\sigma}_{m0} - \frac{1+k}{k}\right)(r/r_0)^k, \quad (13)$$

$$\bar{\sigma}_0 = \frac{\bar{\sigma}_m + 2\bar{\sigma}_\theta}{3} = \frac{3+k}{3k} + \left(\bar{\sigma}_{m0} - \frac{1+k}{k}\right)(r/r_0)^k. \quad (14)$$

It should be noted that this problem is solved quite simply by the second boundary condition for pipe extrusion, which is made for its outlet part from the die (Fig. 1) and it has the following form:
when

$$r = r_1, \bar{\sigma}_{m1} = 0. \quad (15)$$

Here we give only the formulas for the following dimensionless components of the stress state ($\bar{\sigma}_{m*}, \bar{\sigma}_{\theta*}$) and the average stress $\bar{\sigma}_{0*}$ obtained using the boundary condition (15), which allow to compare them with formulas (12)-(14), and then with their numerical results:

$$\bar{\sigma}_{m*} = \frac{1+k}{k} \left(1 - \left(\frac{r}{r_1}\right)^k\right), \quad (16)$$

$$\bar{\sigma}_{\theta*} = \bar{\sigma}_{m*} - 1173 = \frac{1+k}{k} \left(1 - \left(\frac{r}{r_1}\right)^k\right) - 1 = \frac{1}{k} - \frac{1+k}{k} \left(\frac{r}{r_1}\right)^k, \quad (17)$$

$$\bar{\sigma}_{0*} = \frac{\bar{\sigma}_{m*} + 2\bar{\sigma}_{\theta*}}{3} = \frac{1}{3} \left(\frac{1+k}{k} \left(1 - \left(\frac{r}{r_1}\right)^k\right) + 2 \left(\frac{1}{k} - \frac{1+k}{k} \left(\frac{r}{r_1}\right)^k \right) \right),$$

where

$$\bar{\sigma}_{0*} = \frac{1}{3} \left(\frac{3+k}{k} - \frac{3+3k}{k} \left(\frac{r}{r_1}\right)^k \right). \quad (18)$$

A comparison of formulas (12)-(14) and (16)-(18) shows that the main difference between them is the denominator of fractions of variable r of the problem: $\frac{r}{r_0}$ and $\frac{r}{r_1}$.

It should be noted that for determining the change in material porosity during the sintered pipe extrusion, the engineering analytical conjugate method is used in [3, 4], according to which the data obtained above and the equations of the deformation theory of plasticity of porous materials (DTPPM) [2] are used.

In [4], the yield stress of various sintered materials σ_{T_v} is expressed through the yield strength of the porous material substance σ_T and the porosity function $\beta^{n+0.5}$:

$$\sigma_{Tv} = \sigma_T \cdot \beta^{n+0,5}, \quad (19)$$

where v is the material porosity, $\beta = 1 - v$.

Consequently, to determine the true stresses σ_m and σ_θ , together with formulas (7), the following formulas should be used:

$$\sigma_m = \bar{\sigma}_m \beta^{n+0,5} \sigma_T, \sigma_\theta = \bar{\sigma}_\theta \beta^{n+0,5} \sigma_T. \quad (20)$$

It is necessary to use the following formula DTPPM [2] for the determination of the values of the current porosity of material v :

$$v = 1 - (1 - v_0) \exp\left(-\frac{9v_0^m \sigma_0 \varepsilon_{eq0}}{(1-v_0)^{3n} \sigma_{eq0}}\right), \quad (21)$$

where v_0 is the initial porosity of the material; $\sigma_{eq0} = \sigma_T$ and $\varepsilon_{eq0} = \bar{\varepsilon}_i = 1,155|\bar{\varepsilon}_\theta|$ - the respectively simplified values of equivalent stresses and deformations [1,2]; r_0 - the initial radius of the pipe (Fig.1); m and n are the porosity parameters.

The results of the research. To solve the problem of thin-wall pipe extrusion, the following parameters were given: cone angle of matrix - $\varphi = 15^\circ$, the outer diameters of the pipe blank and the product - $D = 25 \text{ mm}$ and $d = 20 \text{ mm}$, the pipe thickness - 2 mm , the yield strength - $\sigma_T = 350 \text{ MPa}$.

Taking into account $k = 2f / \sin 2\varphi$, numerical calculations of the pipe extrusion process loaded with internal pressure were performed in the MS EXCEL software environment for various friction coefficients ($f = 0,05; 0,1$ и $0,15$). In these cases, the values of the coefficient k will be $0,2; 0,4$ and $0,6$.

Tables 1-4 and Fig. 2 show the data of SSS at $k = 0,4$ and $0,6$; initial material porosities $v_0 = 0,1; 0,2$ and $0,3$ in the case of $m = 1$ and $n = 0,25$ [2].

Numerical calculations were performed by formulas (12)-(14) in the absence of initial values of compressible meridional dimensionless stress $\bar{\sigma}_{m20}$, therefore a computer simulation of the process was performed in the MS EXCEL software environment by pre-setting different initial values $\bar{\sigma}_{m0}$. The pipe extrusion process will corresponded to a value $\bar{\sigma}_{m0}$ when the pipe meridional stress $\bar{\sigma}_m$ equals 0 in the outlet of die.

In Tables 1-3, at $k = 0,4$, the data of SSS given are for three values $\bar{\sigma}_{m0}$ ($-0,326; -0,327$ и $-0,328$), from which it follows that in the average case $\bar{\sigma}_{m0} = -0,327$, the meridional stress has acquired the value 0 in the die outlet. At $k = 0,6$, in the die inlet, the case $\bar{\sigma}_{m0} = -0,382$ was also found by computer simulation (Table 4), when the meridional stress $\bar{\sigma}_m = 0$ in the die outlet.

Table 1

Numerical calculation data in the presence of friction ($k = 0,4$) and initial meridional stress $\bar{\sigma}_{m0} = -0,326$

r/r_0	$-\bar{\varepsilon}_\theta$	$\bar{\varepsilon}_i$	$-\bar{\sigma}_m$	$-\bar{\sigma}_\theta$	$-\bar{\sigma}_0$	ν_1	ν_2	ν_3
1	0	0.000	0.326	1.326	0.993	0.100	0.200	0.300
0.98	0.020	0.023	0.295	1.295	0.962	0.080	0.161	0.242
0.96	0.041	0.047	0.264	1.264	0.931	0.061	0.122	0.183
0.94	0.062	0.071	0.232	1.232	0.899	0.042	0.083	0.122
0.92	0.083	0.096	0.200	1.200	0.867	0.024	0.044	0.060
0.9	0.105	0.122	0.168	1.168	0.835	0.006	0.007	-0.002
0.88	0.128	0.148	0.135	1.135	0.802	-0.010	-0.029	-0.063
0.86	0.151	0.174	0.102	1.102	0.769	-0.025	-0.064	-0.123
0.84	0.174	0.201	0.068	1.068	0.735	-0.040	-0.096	-0.180
0.82	0.198	0.229	0.034	1.034	0.701	-0.052	-0.126	-0.234
0.8	0.223	0.258	-0.001	0.999	0.666	-0.064	-0.153	-0.283

Table 2

Numerical calculation data in the presence of friction ($k = 0,4$) and initial compressive meridional stress $\bar{\sigma}_{m0} = -0,327$

r/r_0	$-\bar{\varepsilon}_\theta$	$\bar{\varepsilon}_i$	$-\bar{\sigma}_m$	$-\bar{\sigma}_\theta$	$-\bar{\sigma}_0$	ν_1	ν_2	ν_3
1	0	0.000	0.327	1.327	0.994	0.100	0.200	0.300
0.98	0.020	0.023	0.296	1.296	0.963	0.080	0.161	0.242
0.96	0.041	0.047	0.265	1.265	0.932	0.061	0.122	0.183
0.94	0.062	0.071	0.233	1.233	0.900	0.042	0.083	0.122
0.92	0.083	0.096	0.201	1.201	0.868	0.024	0.044	0.060
0.9	0.105	0.122	0.169	1.169	0.836	0.006	0.007	-0.002
0.88	0.128	0.148	0.136	1.136	0.803	-0.010	-0.030	-0.064
0.86	0.151	0.174	0.103	1.103	0.770	-0.026	-0.064	-0.123
0.84	0.174	0.201	0.069	1.069	0.736	-0.040	-0.097	-0.181
0.82	0.198	0.229	0.035	1.035	0.702	-0.053	-0.126	-0.235
0.8	0.223	0.258	0.000	1.000	0.667	-0.064	-0.153	-0.284

Table 3

Numerical calculation data in the presence of friction ($k = 0,4$) and initial compressive meridional stress $\bar{\sigma}_{m0} = -0,328$

r/r_0	$-\bar{\epsilon}_\theta$	$\bar{\epsilon}_i$	$-\bar{\sigma}_m$	$-\bar{\sigma}_\theta$	$-\bar{\sigma}_0$	ν_1	ν_2	ν_3
1	0	0.000	0.328	1.328	0.995	0.100	0.200	0.300
0.98	0.020	0.023	0.297	1.297	0.964	0.080	0.161	0.242
0.96	0.041	0.047	0.266	1.266	0.933	0.061	0.122	0.183
0.94	0.062	0.071	0.234	1.234	0.901	0.042	0.083	0.121
0.92	0.083	0.096	0.202	1.202	0.869	0.024	0.044	0.060
0.9	0.105	0.122	0.170	1.170	0.837	0.006	0.006	-0.003
0.88	0.128	0.148	0.137	1.137	0.804	-0.010	-0.030	-0.064
0.86	0.151	0.174	0.104	1.104	0.771	-0.026	-0.064	-0.124
0.84	0.174	0.201	0.070	1.070	0.737	-0.040	-0.097	-0.182
0.82	0.198	0.229	0.036	1.036	0.703	-0.053	-0.127	-0.235
0.8	0.223	0.258	0.001	1.001	0.668	-0.064	-0.154	-0.285

Table 4

Numerical calculation data in the presence of friction ($k = 0,6$) and initial compressive meridional stress $\bar{\sigma}_{m0} = -0,382$

r/r_0	$-\bar{\epsilon}_\theta$	$\bar{\epsilon}_i$	$-\bar{\sigma}_m$	$-\bar{\sigma}_\theta$	$-\bar{\sigma}_0$	ν_1	ν_2	ν_3
1	0	0.000	0.382	1.382	1.049	0.100	0.200	0.300
0.98	0.020	0.023	0.345	1.345	1.012	0.079	0.159	0.239
0.96	0.041	0.047	0.308	1.308	0.975	0.059	0.118	0.177
0.94	0.062	0.071	0.271	1.271	0.938	0.039	0.077	0.113
0.92	0.083	0.096	0.233	1.233	0.900	0.021	0.038	0.050
0.9	0.105	0.122	0.195	1.195	0.862	0.003	0.000	-0.013
0.88	0.128	0.148	0.157	1.157	0.824	-0.013	-0.036	-0.075
0.86	0.151	0.174	0.118	1.118	0.785	-0.028	-0.070	-0.134
0.84	0.174	0.201	0.079	1.079	0.746	-0.042	-0.101	-0.189
0.82	0.198	0.229	0.040	1.040	0.706	-0.054	-0.129	-0.239
0.8	0.223	0.258	0.000	1.000	-0.667	-0.064	-0.153	-0.283

Numerical calculations in case of the second boundary condition are carried out by formulas (16)-(18), which do not differ much from the data of formulas (12)-(14). Therefore, in this case, there is no need to show the full tabular data of the SSS research and only short data are given in Tables 5 and 6.

Table 5

Numerical calculation data in the presence of friction ($k = 0,4$) and boundary pipe extrusion condition, for its die outlet: $r = r_1, \bar{\sigma}_{m1} = 0$

$\bar{\epsilon}_\theta$	$\bar{\epsilon}_i$	r/r_1	$\bar{\sigma}_m$	$\bar{\sigma}_\theta$	$\bar{\sigma}_0$	ν_1	ν_2	ν_3
0	0	1.250	-0.327	-1.327	-0.993	0.100	0.200	0.300
-0.020	0.023	1.225	-0.296	-1.296	-0.963	0.080	0.161	0.242
-0.041	0.047	1.200	-0.265	-1.265	-0.931	0.061	0.122	0.183

Table 6

Numerical calculation data in the presence of friction ($k = 0,6$) and boundary pipe extrusion condition, for its die outlet: $r = r_1$, $\bar{\sigma}_{m1} = 0$

$\bar{\epsilon}_\theta$	$\bar{\epsilon}_i$	r/r_1	$\bar{\sigma}_m$	$\bar{\sigma}_\theta$	$\bar{\sigma}_0$	v_1	v_2	v_3
0	0	1.250	-0.382	-1.382	-1.049	0.100	0.200	0.300
-0.020	0.023	1.225	-0.345	-1.345	-1.012	0.079	0.159	0.239
-0.041	0.047	1.200	-0.308	-1.308	-0.975	0.059	0.118	0.177

A comparison of the numerical data calculated by formulas (12)-(14) and (16)-(18) shows that the main difference between them is the column r of the task variable problem $\frac{r}{r_0}$ and $\frac{r}{r_1}$, which provides an exact match of the main results.

The graphs of changes in the dimensionless values of meridional, circumferential and average stresses, as well as material porosity, depending on the degree of pipe deformation are shown in Figures 2 and 3.

It can be seen from Fig. 3 that 10, 20 and 30% of the initial porosity of the material becomes zero in the range of strain intensities $\bar{\epsilon}_i$ from 0.116 to 0.132, and in case of larger porosities and contact friction, the compaction of the material is more intense.




Fig. 2. Graphs of change in dimensionless values of meridional, circumferential and medium stresses




Fig. 3. Graphs of changes in 10, 20 and 30% of the initial porosity of materials

Conclusions

1. A study of the process of extrusion of thin-wall pipe loaded with internal high pressure with boundary condition in the inlet of a conical die, when the initial values of compressible meridional dimensionless stress $\bar{\sigma}_{m20}$ are absent, has been carried out. The dimensionless values of meridional, circumferential and average stresses depending on the degree of pipe deformation were determined, which allowed to study the process of pipe material compaction using the DTPPM equations at various values of friction coefficients.

2. A computer simulation of the process was carried out in the MS EXCEL software environment, presetting different initial values $\bar{\sigma}_{m0}$. The pipe extrusion process will correspond to the value $\bar{\sigma}_{m0}$, when the pipe meridional stress $\bar{\sigma}_m$ equals 0 in the outlet of the die. In this case, the strain intensity value is $\varepsilon_i = 0,258$.

3. The data of numerical calculations show that at the coefficient of friction $f = 0,1$ ($k = 0,4$), it has been established, with computer simulation, that in case of a dimensionless compressive, the initial value of the meridional stress is $\bar{\sigma}_{m0} = -0,327$, in the die outlet, the meridional stress acquired the value 0. And in the case of coefficient of friction $f = 0,15$ ($k = 0,6$), the meridional stress at $\bar{\sigma}_{m0} = -0,382$ acquired the value 0 in the die outlet.

4. The graphs of changes in 10, 20 and 30% of the initial porosities of the material show that the porosity becomes zero in the range of strain intensities ε_i from 0,116 to 0,132, and in the case of large values of porosities and contact friction, the material compaction is more intense.

5. In order to verify the obtained formulas and the results of numerical calculations, the problem is solved quite simply by the second boundary condition for the pipe extrusion, composed for the outlet part of the pipe from the die ($r = r_1$), where the meridional stress is absent ($\bar{\sigma}_{m1} = 0$). It has been found that both solutions are identical.

REFERENCES

1. **Malinin N.N.** Applied theory of plasticity and creep. - M.: Mechanical engineering, 1975. - 399 p.
2. **Petrosyan G.L.** Plastic deformation of powder materials. - M.: Metallurgy, 1988. – 153 p.
3. **Petrosyan G.L., Babayan A.A., Margaryan M.A.** Computer simulation and analytical research of the extrusion process of a thin-walled pipe loaded by internal high pressure // Bulletin of the National Polytechnic University of Armenia (NPUA): Mech., Mach. Sci., Mach. Build. - 2020. - No. 2. – P. 9-22.
4. **Petrosyan G.L., Margaryan M.A., Vardanyan G.G., Babayan A.A.** Investigating the process of drawing of a thin-walled sintered pipe through a conical matrix // Proceedings NAS of Armenia and NPUA. Series of Technical Sciences. - 2019.- Vol. 72, No. 1. - P. 5-14.

National Polytechnic University of Armenia. The material is received on 01.07.2022.

Ա.Ա. ԲԱԲԱՅԱՆ

ՆԵՐՔԻՆ ԲԱՐՁՐ ՃՆՇՈՒՄՈՎ ԲԵՌՆԱՎՈՐՎԱԾ ԵՌԱԿԱԼՎԱԾ ԲԱՐԱԿԱՊԱՏ ԽՈՂՈՎԱԿԻ ԱՐՏԱՄՂՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ՄԱՍԼԱՄԱՅՐ ՄՏՆՈՂ ԵԶՐԱՑԻՆ ՊԱՅՄԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ

Կատարվել է ներքին բարձր ճնշումով բեռնավորված եռակալված խողովակի կոնսկան մամլամայրում մամլման գործընթացի հետազոտում՝ վերլուծական մեթոդով, դրա մամլամայր մտնող վերին լայնական հատույթին սեղմող միջօրեական լարում կիրառելով: Ենթադրվում է, որ խողովակի վրա ազդող մամլամայրի հպակային p , և դրա ներսում ազդող p , ճնշումները հավասար են: Այդ դեպքում որոշվում է խողովակի շրջանային լարումը, և ստացվում է պարզեցված պլաստիկության պայման: Որոշվել են խողովակի դեֆորմացման աստիճանից կախված միջօրեական, շրջանային և միջին լարումների չափագուրկ մեծությունները, որոնք հնարավորություն են տվել, օգտագործելով ծակոտկեն նյութերի պլաստիկության դեֆորմացիոն տեսության բանաձևերը, տարբեր շփման գործակիցների և խողովակի նյութի սկզբնական ծակոտկենության դեպքերում ուսումնասիրել դրանց խտացման գործընթացը:

MS EXEL ծրագրային միջավայրում կատարվել է գործընթացի համակարգչային մոդելավորում տարբեր սկզբնական սեղմող միջօրեական չափագուրկ լարումների դեպքում: Խողովակի արտամղման գործընթացին կհամապատասխանի այդ լարման այնպիսի սկզբնական մեծություն, երբ խողովակի միջօրեական լարումը մամլամայրից դուրս գալու ժամանակ կհավասարվի զրոյի: Այդ դեպքում դեֆորմացիաների ինտենսիվության արժեքը հավասար է $\varepsilon_i = 0,258$:

10, 20 և 30% սկզբնական ծակոտկենությամբ նյութի կորերի փոփոխությունները ցույց են տալիս, որ ծակոտկենությունը դառնում է զրո դեֆորմացիաների ինտենսիվության ε_i 0,116 – ից մինչև 0,132 միջակայքում: Ծակոտկենության և հպակային շփման մեծ արժեքների դեպքում նյութի խտացումը տեղի է ունենում ավելի ինտենսիվ:

Առանցքային բառեր. բարակապատ խողովակ, արտամղում, եզրային պայման, շրջանային լարում, եռակալված նյութ, համակարգչային մոդելավորում:

А.А. БАБАЯН

**ИССЛЕДОВАНИЕ ПРОЦЕССА ЭКСТРУЗИИ СПЕЧЕННОЙ
ТОНКОСТЕННОЙ ТРУБЫ, НАГРУЖЕННОЙ ВНУТРЕННИМ ВЫСОКИМ
ДАВЛЕНИЕМ, ПРИ ВХОДЕ В МАТРИЦУ В СЛУЧАЕ ГРАНИЧНОГО
УСЛОВИЯ**

Проведено аналитическое исследование процесса экструзии спеченной тонкостенной трубы, нагруженной внутренним высоким давлением, при входе в коническую матрицу с использованием сжимающего меридионального безразмерного напряжения на ее поперечном сечении. Предполагается, что действующие на трубу внешнее давление матрицы p_v и внутреннее высокое давление p_r равны. В этом случае определяется окружное напряжение и получается упрощенное условие пластичности. Определены безразмерные величины меридиональных, окружных и средних напряжений в зависимости от степени деформации трубы, которые позволили с использованием уравнений деформационной теории пластичности пористых материалов при различных значениях коэффициентов трения и начальных пористостей материала труб изучить процессы их уплотнения.

Проведено компьютерное моделирование процесса в программной среде MS EXEL при различных начальных значениях сжимающего меридионального безразмерного напряжения. Процессу экструзии трубы соответствует такое начальное значение этого напряжения, когда меридиональное напряжение трубы при выходе из матрицы равняется нулю. При этом величина интенсивностей деформации равна $\varepsilon_i = 0,258$.

Графики изменения начальных пористостей материала 10, 20 и 30% показывают, что пористость становится нулевой в интервале величины интенсивностей деформации ε_i от 0,116 до 0,132. В случае больших величин пористостей и контактного трения уплотнение материала происходит более интенсивно.

Ключевые слова: тонкостенная труба, экструзия, граничное условие, окружное напряжение, спеченный материал, компьютерное моделирование.

Վ.Ա. ՄԻՍՈՆՅԱՆ

ՌԵՆԻՏԻՄԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՀԵՏ ԵՎ ՄԻՋՄԵՏԱՂԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Կատարվել է IV-VIII խմբի մետաղական անցումային տարրերի հետ ռենիտիմի փոխազդեցության գործընթացի վերլուծություն: Ցույց են տրվել ռենիտիմի՝ որպես լեգիրող տարրի առավելությունները կոնստրուկցիոն պողպատների և հատկապես հատուկ տեխնիկայում օգտագործվող պողպատների լեգիրման դեպքում: Re-ի համաձուլվածքները, ինչպիսիք են վոլֆրամի, մոլիբդենի և տանտալի համաձուլվածքները, ջերմադիմացկուն և դժվարաբեռ լինելուց բացի, օժտված են առանձնահատուկ պլաստիկությամբ, ինչը պայմանավորված է ածխածնի անջատումով փխրուն կարբիդներից և ռենիտիմի ու ածխածնի պինդ լուծույթների առաջացումով: Ցույց է տրվել, որ ռենիտիմը ութերորդ խմբի տարրերի հետ առաջացնում է անսահմանանփակ լուծելիությամբ պինդ լուծույթներ:

Ռենիտիմի համակարգերում առաջանում են երկու տասնյակ միջմետաղական միացություններ՝ σ և χ ֆազեր: Չորրորդ խմբի տարրերի հետ, բացի այդ ֆազերից, առաջանում են նաև λ ֆազեր (Լավենի ֆազեր): Ռենիտիմը, լինելով խիտ հեքսագոնալ կառուցվածք ունեցող մետաղ, ունի բարձր լուծելիություն V և VI խմբերի մետաղներում, որոնք ծավալակենտրոն խորանարդային են՝ մինչև 65 *ատ. %*: Ռենիտիմի լուծելիությունը IV խմբի պոլիմորֆ մետաղների հեքսագոնալ α մոդիֆիկացիաներում չափազանց փոքր է (0,5...4,0%) այն դեպքում, երբ այդ նույն տարրերի ծավալակենտրոն β մոդիֆիկացիաներում լուծելիությունը (տիտանի դեպքում) հասնում է 50 *ատ. %*: Re-ն օժտված է բարձր ջերմակայունությամբ: Նրա ամրությունը մինչև 1200°C ջերմաստիճանի պայմաններում ավելի բարձր է, քան վոլֆրամինը և նշանակալիորեն գերազանցում է Mo-ի ամրությանը:

Առանցքային բառեր. ռենիտիմ, լեգիրող տարր, համաձուլվածք, ֆազ, պինդ լուծույթ, ինտերմետաղական միացություն, ջերմակայունություն, ամրություն, պլաստիկություն, մաշակայունություն:

Ներածություն. Ռենիտիմը՝ որպես հազվագյուտ հատկություններով օժտված մետաղ, օգտագործվում է ժամանակակից տեխնիկայի տարբեր բնագավառներում, այդ թվում՝ հրթիռային տեխնիկայում, ատոմային ռեակտորներում, գազատուրբինային տեղակայանքներում, նավթային կրեկինգում, մոլիբդենային էլեկտրոդներում, էլեկտրոդային լամպերում, էլեկտրատեխնիկայում, ինչպես նաև թերմոզույգերի պատրաստման համար և այլ դեպքերում: Բարձր ամրության և մաշակայունության շնորհիվ՝ ռենիտիմային համաձուլվածքներն օգտագործվում են

մաշակայուն դետալներ պատրաստելու համար, ինչպիսիք են՝ կշեռքների հենարանները, գեոդեզիական սարքերի առանցքակալները, գնդերի հենարանները, զսպանակները և այլն: Այս տեսակետից ռենիումով լեզիրված բարձր ամրությամբ ու մաշակայունությամբ նոր համաձուլվածքների ստեղծումն առհասարակ համարվում է խիստ արդիական խնդիր հատկապես Հայաստանի Հանրապետության համար, որտեղ առկա են ռենիումի մեծ պաշարներ: Այն հանդես է գալիս մոլիբդենիտային հանքանյութերում՝ ներդրված մոլիբդենիտի բյուրեղային ցանցում: Մոլիբդենի եռօքսիդի ստացման ժամանակ, որը կատարվում է մոլիբդենիտային խտանյութի բովմամբ, ռենիումը հեռանում է Re_2O_7 օքսիդի տեսքով՝ ստեղծելով բնապահպանական լուրջ խնդիրներ: Հետևապես՝ անհրաժեշտ է այն կորզել և օգտագործել նոր համաձուլվածքների մշակման գործընթացում՝ դրանց տալով բարձր ամրություն և մաշակայունություն:

Ելնելով վերոհիշյալից՝ աշխատանքի նպատակն է ուսումնասիրել մետաղների հետ ռենիումի փոխազդեցության և միջմետաղական միացությունների առաջացման գործընթացը՝ բարձր ամրությամբ և մաշակայունությամբ փոշեպող պատների ստացման նպատակով:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը. Արտաքին էլեկտրոնային թաղանթներում ռենիումն ունի յոթական էլեկտրոններ՝ ${}^{75}\text{Re} - [\text{Xe}]4f^{14}5d^56s^2$: Միացություններում ռենիումը դրսևորում է փոփոխական՝ -1-ից մինչև +7 օքսիդացման աստիճան: Ատոմական մեծ կշիռ ունեցող անցումային մետաղների դեպքում բարձր օքսիդացման աստիճանն ավելի կայուն է: Ռենիումի բարձր օքսիդացման աստիճանի միացությունները, համեմատած մանգանի նույնանման միացությունների հետ, ավելի կայուն են: Օրինակ՝ Mn_2O_7 -ը 0°C -ում արդեն նշանակալիորեն քայքայվում է, Tc_2O_7 -ը $119,5^\circ\text{C}$ -ում հալվում է՝ առանց քայքայման, իսկ Re_2O_7 -ը $300,3^\circ\text{C}$ -ում սուբլիմացվում է՝ առանց թթվածին կորցնելու: Դրա հետևանքով +7 օքսիդացման աստիճանով Re_2O_7 -ը, մանգանի միացությունների հետ համեմատած, ավելի թույլ օքսիդիչ է: Ցածր օքսիդացման աստիճանով Re -ի միացությունները, ի տարբերություն Mn(II) միացությունների, ավելի դժվար են ստացվում, կայուն չեն, որի հետևանքով բավարար չափով ուսումնասիրված չեն [1-5]:

Քանի որ Re -ի ատոմում d ենթաթաղանթը մասնակի է լրացված, այն առաջացնում է բազմաթիվ կոմպլեքսներ և մետաղ-մետաղ միացություններ: Ռենիումը դժվարահալ ($T_{\text{հալ}}=3177^\circ\text{C}$) և ծանր (խտությունը՝ $d=21,033 \text{ g/cm}^3$) մետաղ է [6, 7]: Մետաղի փոշին, կախված դիսպերսությունից, լինում է սև կամ մուգ մոխրագույն: Մի շարք ֆիզիկական հատկություններով ռենիումը մոտենում է IV խմբի դժվարահալ մետաղներին (Mo , W), ինչպես նաև պլատինի խմբի մետաղներին: Հալման ջերմաստիճանով ռենիումը ($T_{\text{հալ}}=3177^\circ\text{C}$) զիջում է միայն վոլֆրամին ($T_{\text{հալ}}=3387^\circ\text{C}$)՝ զբաղեցնելով II տեղը, իսկ խտությամբ IV տեղում է՝ Os -ից ($d=22,48 \text{ g/cm}^3$), Ir -ից

($d=23,36 \text{ Գ/սմ}^3$) և Pt-ից ($d=21,5 \text{ Գ/սմ}^3$) հետո [6, 7]: Re-ը բյուրեղանում է խիտ դասավորված հեքսագոնալ կառուցվածք ունեցող բյուրեղավանդակով [2]: Մաքուր մետաղը պլաստիկ է սենյակային ջերմաստիճանում, բայց, առաձգականության բարձր մոդուլի հետևանքով, սառը մշակումից հետո ամրությունը կտրուկ մեծանում է՝ կոփման շնորհիվ: Պլաստիկության վերականգնման համար այն թրծում են ջրածի միջավայրում, իներտ գազում կամ վակուումում: Re-ը պահապանում է բարձր ամրությունը և մաշակայունությունը բազմակի տաքացումների և սառեցումների ընթացքում, այսինքն այն օժտված է բարձր ջերմակայունությամբ: Նրա ամրությունը մինչև 1200°C ջերմաստիճանի պայմաններում ավելի բարձր է, քան վոլֆրամինը, և նշանակալիորեն գերազանցում է Mo-ի ամրությանը: Re-ի էլեկտրադիմադրությունը գրեթե չորս անգամ մեծ է, քան վոլֆրամինը և մոլիբդենինը [6, 7]:

Սովորական պայմաններում Re-ն օդում կայուն է: Re-ի նուրբ հատիկներն օդում խոնավանում են, որը բացատրվում է նրա մասնակի օքսիդացմամբ, առաջացնելով խոնավություն կլանող Re_2O_7 : Մետաղի օքսիդացումը սկսվում է 300°C -ից բարձր ջերմաստիճաններում՝ առաջացնելով Re_2O_7 , որն այդ ժամանակ սուրլիմացվում (ցնդում) է: H-ի և N-ի հետ Re-ը մինչև հալման ջերմաստիճանը փոխազդեցության մեջ չի մտնում, բայց փոշենման մետաղն ուժեղ աբսորբում է ջրածին: Ի տարբերություն այլ դժվարահալ մետաղների՝ Re-ը չի առաջացնում կարբիդներ, սակայն տաքացնելիս ածխածինը լուծվում է ռենիումի մեջ՝ վատացնելով նրա մեխանիկական հատկությունները: Re-C համակարգում էվտեկտիկան հալվում է 2480°C -ում [8]: Սովորական ջերմաստիճանի պայմաններում ծծմբի հետ Re-ն առաջացնում է դիսուլֆիդ՝ ReS_2 , տաքացնելիս ֆտորի և քլորի հետ փոխազդում է՝ առաջացնելով համապատասխանաբար ReF_6 և ReCl_5 , իսկ բրոմի և յոդի հետ գործնականում չի փոխազդում [9]:

Re-ը կայուն է այնպիսի մետաղների հալույթների նկատմամբ, ինչպիսիք են Sn, Zn, Cu և Ag, միևնույն ժամանակ, հեղուկ Al-ը, Fe-ը և Ni-ը հեշտությամբ լուծում են այն [8-11]:

Հայտնի են ռենիումի թթվածնային միացություններ, որտեղ Re-ի օքսիդացման աստիճանը -1-ից +7 է: Կայուն օքսիդներն են՝ Re_2O_7 , ReO_3 և ReO_2 [11]:

Ռենիումը պլատինի շարքի մետաղների նման խիստ հակված է կոմպլեքսագոյացման, նրա կոորդինացիոն թիվը փոփոխվում է 4...9: Դա բացատրվում է նրանով, որ ռենիումի d-օրբիտալն լրացված է կիսով չափ, որը հանգեցնում է նրա տարբեր օքսիդացման աստիճաններին և ընձեռում է կապերի առաջացման մեծ հնարավորություններ: Ամենից շատ տարածված են ռենիումի այն միացությունները, որոնք ունեն 6 (բյուրեղային ցանցը օկտաէդր է) և 4 կոորդինացիոն թվեր (բյուրեղային ցանցը տետրաէդր է): 9-ին, հավասար կոորդինացիոն թիվ ստացվում է

միայն այն դեպքում, երբ լիզանտը ատոմի փոքրագույն մասնիկներ ունեցող ջրածինն է:

Հետազոտության արդյունքները. Ռենիումը անցումային մետաղների հետ առաջացնում է մի քանի տեսակի համակարգեր [8-16]: VIII խմբի մետաղների հետ, որոնք ունեն ավելի լրացված d-օրբիտալներ և բարձր օքսիդացման աստիճաններ, ռենիումն առաջացնում է համակարգեր՝ առանց միջմետաղական միացությունների: Հեքսագոնալ բյուրեղավանդակով մետաղների հետ՝ Tc (VII խումբ), α -Co, Ru և Os (VIII խումբ), ռենիումն առաջացնում է պինդ լուծույթներ, VIII խմբի մնացած մետաղների՝ Ni, Pb, Ir, Rh, Pt (բացառությամբ Fe) հետ սահմանափակ պինդ լուծույթներ: Cu, Ag, Au, Zn և Sn մետաղների հետ ռենիումը չի լուծվում ոչ հեղուկ, ոչ էլ պինդ վիճակում: III-IV խմբերի անցումային մետաղների հետ, որոնք գտնվում են ռենիումից ձախ, ունեն քիչ լրացված d-օրբիտալներ և ցածր օքսիդացման աստիճաններ, ռենիումն առաջացնում է բարդ համակարգեր՝ մեկ կամ մի քանի ինտերմետաղական (միջմետաղական) միացություններով, և միևնույն ժամանակ՝ սահմանափակ պինդ լուծույթներ: Ռենիումի միջմետաղական միացություններն ամբողջովին ուսումնասիրված չեն: Հիմնականում ուսումնասիրվել են պարբերական աղյուսակի IV, V, VI և VIII խմբերի տարրերի վիճակի դիագրամները:

Անընդհատ պինդ լուծույթների ստացումը ռենիումի հետ բացահայտված է միայն որոշ տարրերի դեպքում (ինչպես, օրինակ՝ կոբալտի հետ): Բացահայտված է ռենիումի բարձր փոխադարձ լուծելիությունը մի շարք մետաղների, այդ թվում՝ նիկելի, պլատինի, պալադիումի, իրիդիումի հետ: Առաջին խմբի մետաղների՝ պոնձի, արծաթի, ոսկու հետ ռենիումը չի լուծվում ոչ հեղուկ, ոչ էլ պինդ վիճակում [8-11]:

Ռենիումը, ունենալով հեքսագոնալ բյուրեղային ցանց, պետք է ավելի լավ լուծելիություն ունենար IV խմբի հեքսագոնալ կառուցվածք ունեցող մետաղների հետ: Իրականում ռենիումի հեքսագոնալ α -մոդիֆիկացիայի լուծելիությունը տիտանի, ցիրկոնիումի, հաֆնիումի հետ շատ փոքր է (0,5...4,0%) այն դեպքում, երբ խորանարդային բարձր ջերմաստիճանային մոդիֆիկացիաներում, այսինքն V և VI խմբերի տարրերի հետ ռենիումի լուծելիությունը անհամեմատ ավելի բարձր է՝ 50...65%: Ժամանակակից տեսական և գիտափորձական ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրահանգելու, որ մետաղական համաձուլվածքների գործոնները, որոնք ազդում են տարրերի ֆիզիկաքիմիական փոխկապակցությունների վրա, մեծ մասամբ կապված են Մենդելևի պարբերական աղյուսակում ունեցած իրենց դիրքից, միջատոմային չափերից, բյուրեղային ցանցի տիպից, իոնացման պոտենցիալից, ջերմության գոյացումից, սեղմելիությունից և այլն:

Նկ. 1-ում ցույց են տրված ռենիումի փոխազդեցության բնութագրերը պարբերական համակարգի բոլոր տարրերի հետ, որից երևում է, որ ռենիումը տեխնիցիումի, ռութենիումի, օսմիումի և կոբալտի հետ առաջացնում է պինդ լուծույթ-

ներ [6, 7, 17]: Վերոհիշյալ տարրերը պարբերական համակարգում դասավորված են ռենիումին մոտ, ատոմային չափերը քիչ են տարբերվում ($<10\%$) և ունեն իզոմորֆ բյուրեղային կառուցվածք: Մի շարք տարրեր, այդ թվում՝ նիկելը, ռոդիումը, պալադիումը, իրիդիումը և պլատինը ռենիումի հետ առաջացնում են պինդ լուծույթներ՝ առանց միջանկյալ փազերի:

Խ ա մ բ ե ր ք																	
IA	IIA	IIIA	IVA	VA	VIA	VIIA	VIIIA		IB	IIB	IIIB	IVB	VB	VIB	VIIA	VIIIB	
															H	He	
Li	Be	Անցումային մետաղներ									B	C	N	O	F	Ne	
Na	Mg										Al	Si	P	S	Cl	Ar	
K	Ca	Sc	Ti	V	Cr	Mn	Fe	Co	Ni	Cu	Zn	Ga	Ge	As	Se	Br	Kr
Rb	Sr	Y	Zr	Nb	Mo	Tc	Ru	Rh	Pd	Ag	Cd	In	Sn	Sb	Te	I	Xe
Cs	Ba	La	Hf	Ta	W	Re	Os	Ir	Pt	Au	Hg	Tl	Pb	Bi	Po	At	Rn
Fr	Ra	Ac**	Ku														
				*Ce	Pr	Nd	Pm	Sm	Eu	Gd	Tb	Dy	Ho	Er	Tm	Yb	Lu
				(Th)	Pa	U	Np	Pu	Am	Cm	Bk	Cf	Es	Fm	Md	(No)	Lr

Նկ. 1. Մենդելևի պարբերական համակարգի տարրերը, որոնք, փոխադրելով ռենիումի հետ, առաջացնում են՝ 1 - պինդ լուծույթների անընդհատ շարք, 2 - սահմանափակ լուծելիությամբ պինդ լուծույթներ՝ առանց քիմիական միացությունների, 3 - սահմանափակ լուծելիությամբ պինդ լուծույթներ քիմիական միացություններով, 4 - քիմիական միացություններ, որոնք վիճակի դիագրամները դեռևս չեն ուսումնասիրված, 5 - տարրեր, որոնք փոխադրեցության մեջ չեն մտնում, 6 - փոխադրեցության վերաբերյալ տեղեկություններ չկան [17]

Ռենիումը մի շարք տարրերի հետ առաջացնում է սահմանափակ լուծելիությամբ պինդ լուծույթներ և քիմիական միացություններ: Ռենիումի հետ փոխադրեցության մեջ չմտնող տարրերի թվին պետք է դասել պղնձի ենթախմբի տարրերը և իներտ գազերը: Ինչպես երևում է նկ. 1-ում բերված տվյալներից, ռենիումի պարբերական համակարգի տարրերի հետ ֆիզիկաքիմիական փոխադրեցությունն ուժեղանում է խմբի համարի նվազմանը զուգընթաց, համակարգի երեք մեծ պարբերությունների դեպքում: VIIIA և VIIIB ենթախմբի տարրերի հետ նկատվում է լրիվ լուծելիությունը հեղուկ վիճակում և սահմանափակ լուծելիություն պինդ վիճակում՝ միաժամանակ առաջացնելով անընդհատ պինդ լուծույթներ: VIA-ից մինչև VIIIB խմբի տարրերի հետ ռենիումն ունի մեկ կամ մի քանի միացություն առաջացնելու հավանականություն:

Անհրաժեշտ է նշել, որ ռենիումի հետ փոխազդող տարրերի VII-ից դեպի III-րդ խմբի անցման դեպքում դիտվում է միացությունների կառուցվածքային տեսակների որոշակի փոփոխություն և երկակի համակարգերում դրանց քանակությունների փոփոխություն ռենիումի և անցումային մետաղների հետ: Այսպես, օրինակ, VII-րդ խմբի Mn, VI-րդ խմբի Mo, W և V-րդ խմբի Ni, Ta հետ ռենիումն առաջացնում է երկու մետաղական միացություն (α և χ ֆազեր), իսկ IV-րդ խմբի Zr, Hf-ի հետ՝ երեք մետաղական միացություն (σ , χ , λ ֆազեր): Ըստ որում, կոմպոնենտների ատոմային շառավիղների տարբերության մեծացմանը զուգընթաց (չնայած ռենիումի հետ սրանց համակառուցվածքությանը) տեղի է ունենում ֆազերի առաջացում, որը որոշվում է չափային գործոնով (χ և λ ֆազ): σ տիպի մետաղական միացությունները, որոնք առաջանում են ռենիումի երկակի համակարգերում անցումային մետաղների հետ, դիտարկվում են ատոմային չափերի և էլեկտրոնային բաղադրության հարաբերական մեծ տարբերության տիրույթում: σ ֆազերի գոյացումը տեղի է ունենում ինչպես դրական չափային գործոնի դեպքում, մինչև +1,7% (Zr-Re համակարգ), այնպես և բացասականի դեպքում՝ -8% (Mn-Re համակարգ), որը վկայում է, որ չափային գործոնի ազդեցությունն առանձնապես էական չէ σ ֆազերի առաջացման դեպքում [8-11]:

Ներածություն. Բարդ ռելիեֆային պայմաններում տեղադրված լեռնային բացահանքերի կողերի կայունության հիմնավորումը մնում է որպես կարևոր և արդիական խնդիր: Նման երկրամեխանիկական միջավայրում նախագծային լուծումների հիմնական հարցերից մեկը բնական լեռնալանջի բեռնվածքից առաջացած բացահանքի կողի կայունության երկրամեխանիկական հիմնավորումն է: Բնական լեռնալանջում տարածվող լեռնային ապարային զանգվածը, նախքան բացահանքի բացումն ու էքսկավացիոն աշխատանքների մեկնարկը, գտնվում է չբեռնված 3D լարվածային հավասարակշիռ վիճակում [1]: Հանքաքարի արդյունահանման ու հանութաբարձման աշխատանքների հետագա կատարումը հանգեցնում է բացահանքի միջկողային լեռնային ապարային զանգվածում բնական լեռնալանջի բեռնվածքից առաջացող երկրամեխանիկական միջավայրի ձևավորմանը, որն էլ իր հերթին հանգեցնում է բացահանքի կողի լեռնային ապարներում լարվածային դաշտի վերաբաշխմանն ու փոփոխմանը [2, 3]:

Ներկայումս հայտնի են բացահանքերի մերկացված կողերից վեր տարածվող բնական լեռնալանջերի ազդեցության նվազեցման մի շարք եղանակներ:

Պրոֆ. Է.Լ. Գալուստյանի կողմից առաջարկած տեխնիկական լուծման համաձայն, հեռացնելով բնական լեռնալանջը, հնարավոր կլինի ապահովել բացահանքի կողի վրա ազդող լարվածային ուժերի ընդհանուր բալանսում հավասարակշռությունը՝ ի հաշիվ տանող պրիզմայի զանգվածի նվազեցման, ինչի շնորհիվ բացահանքի կողը ձեռք կբերի հավելյալ կայունության պաշար [4]: Այս տեխնիկական լուծման թերությունն այն է, որ, բացի լրացուցիչ ծախսերի կատարումից, բացահանքի բեռնված կողի վերին եզրագծից և բնական լեռնալանջից հեռացված ապարային շերտերը կարող են հանգեցնել բացահանքի կողում առկա տեկտոնական խզվածքի մարմնի բացմանը, որտեղ կարող են ներհուսել ձնհալից և անձրևաջրերից առաջացած ջրերը [4]:

Հայտնի է նաև լեռնալանջերի ու թեք հարթությունների վրա կազմավորվող հարթ շեպերով լցակույտերի աստիճանների մոդելավորման համար մշակված ստենդի կառուցվածքը [5]: Հայտնի տեխնիկական լուծման համաձայն՝ շեպերի մոդելավորումը կատարվում է երկու տարբերակով. պտտվող և անշարժ ստենդների վրա, որտեղ համարժեք նյութի ֆիզիկա-մեխանիկական բնութագրիչների տվյալներով ձևավորված շեպերի սահքի հարթության կառուցումն իրագործվում է օրդինատաչափի միջոցով: Պտտվող տիպի մոդելավորման ստենդում մոդելավորվող շեպի հարկադրական փլուզումը կատարվում է իր լայնական առանցքի շուրջը ստենդի պտտման միջոցով: Մոդելավորման ստենդի անշարժ տարբերակի համար շեպի թեքության անկյան մեծացումը կատարվում է շեպի երկայնքով համարժեք նյութի զանգվածի բարակ շերտերով հեռացման (քերման) միջոցով: Վերոնշյալ մոդելավորման ստենդի թերությունն այն է, որ վերջինս հնարավորություն չի ընձեռում՝ որոշելու բացահանքային մերկացված թեքությունների միջկողային լեռնային ապարային զանգվածի լարվածային դաշտի վրա բացահանքի վերին նիշից տարածվող բնական անխախտ լեռնալանջերի անմիջական ազդեցությունը:

Հանրահայտ են Ռուսաստանի Դաշնության լեռնային երկրամեխանիկայի և մարկշեյդերական գործի գիտահետազոտական ինստիտուտում (ВНИМИ) համարժեք նյութերի օգտագործմամբ բացահանքերի կողերի կայունության գնահատման ուղղությամբ կատարված հետազոտությունները: Մոդելավորման արդյունքները համեմատվել են պրոֆ. Գ.Լ. Ֆիսենկոյի կողմից մշակված՝ բացահանքի կողերի կայունության որոշման հաշվարկային մեթոդով ստացված տվյալների հետ [6]: Այստեղ կատարված ֆիզիկական մոդելավորման փորձերի արդյունքում դիտարկվում են մոդելում բացահանքի կողի հնարավոր փլուզման և հաշվարկային մակերևույթները, ինչպես նաև մոդելի կրիտիկական թեքման այն անկյան որոշմամբ, երբ մոդելավորվող կողը մնում է կայուն: Բարձր գնահատելով այս մոդելային ստենդի կիրառությունը տարբեր երկրամեխանիկական կառուցվածքների կայունության հետազոտման հարցերում, պետք է նշել, սակայն, որ դրա ֆիզիկա-

կան մոդելավորմամբ հնարավոր չէ հայտնաբերել ու հետազոտել բացահանքի վերին եզրից տարածվող բնական լեռնալանջի զանգվածից բացահանքի կողում առաջացող լրացուցիչ լարվածային ուժերի տեղաբաշխումը:

Տեխնիկական հայտնի գրականության, գյուտերի և այլ ինժեներական առաջարկությունների վերլուծությունը ցույց է տվել, որ առկա մոդելային ստենդների միջոցով հնարավոր չէ հայտնաբերել ու որոշել բացահանքի կողի վերին նիշից տարածվող բնական լեռնալանջի բեռնվածքից առաջացած լրացուցիչ լարվածային ուժերի տեղաբաշխման օրինաչափությունները, ինչը պայմանավորված է ներկայումս հայտնի մոդելային ստենդների կառուցվածքով:

Բացահանքի կողերի ապարային զանգվածում, դեֆորմացիաների նվազեցման և կայունության բարձրացման նպատակով, լեռնային գործի հայտնի մասնագետների կողմից առաջարկվել են տեխնիկական տարբեր լուծումներ բացահանքերում կողերի և երկրատեխնիկական այլ կառուցվածքների կայունության պահպանման ուղղությամբ: Լայնորեն հայտնի են Վ.Վ. Ռժեսկու կողմից մշակված բացահանքերի թուլացած բեռնված կամ չբեռնված կողերի կայունության կառավարման հայտնի միջոցառումները [5]: Բացահանքի կողի կայունության պահպանման միջոցառումներից է նաև պրոֆ. Է. Գալուստյանի կողմից մշակված տեխնիկական այն առաջարկությունը, համաձայն որի բացահանքերում երկայնական ընթացքներով տեղադրված ներքին լցակույտերը հանդես են գալիս որպես բացահանքի մերկացած կողի կայունության բարձրացման գործոն: Այս առաջարկության հիմքում ընկած է այն գաղափարը, որ ներքին լցակույտերի ձևավորումը կհանգեցնի բացահանքային կողի պահող պրիզմայի ծավալի մեծացմանը, ինչը հավասարակշռության համար անհրաժեշտ ուժերի ընդհանուր բալանսում հանգեցնում է բացահանքի կողի կայունության ապահովմանը [4]:

Անհրաժեշտ է նշել, որ բացահանքի թուլացած կողի պահող ուժերի մեծացման այս տեխնիկական եղանակի կիրառումը օգտակար է բացահանքի ոչ աշխատանքային կողերի պահպանման դեպքում և աննպատակահարմար է բացահանքի աշխատանքային կողերի կայունության կառավարման հարցերում:

Ուշադրության են արժանի ժամանակակից հետազոտողների՝ Չենգի և ուրիշների կողմից [1] բացահանքի կողի թեքության կայունության վրա դրա վերին եզրագծով տարածվող ներքին լցակույտի ազդեցության 3D մաթեմատիկական մոդելավորման միջոցով ստացված արդյունքները: Հեղինակները հանգել են այն եզրակացությանը, որ «լցակույտի կողմից կողի բեռնված լարվածային դաշտը, որը կազմված է լցակույտի կողմից բեռնված միջավայրից (սեղմող լարվածություն) և լեռնային ապարային զանգվածի սեփական քաշից ձևավորված չբեռնված միջավայրից (ձգման լարումներ), նպաստում է ձգման լարումներից առաջացած ճեղքերի լեռնային ապարային զանգվածում հետագա ներթափանցմանը, զար-

գացմանն ու անկանոն կերպով տարածմանը» [1]: Այս հետազոտության հեղինակները բեռնված երկրամեխանիկական միջավայրում հաշվի են առել ներքին լցակույտերի անմիջական ազդեցությունը բացահանքային թեքության կայունության վրա՝ գնահատելով լեռնային ապարային զանգվածի ամրության վրա վերաբաշխված լարվածային դաշտի առավելագույն սեղմող և ձգող լարվածությունները: Նշված աշխատանքի հեղինակները 3D մաթեմատիկական մոդելավորմամբ ստացել են ուշագրավ արդյունքներ, սակայն, եռաչափ մաթեմատիկական մոդելավորումից ստացված տեսական արդյունքները հիմնավորված չեն բացահանքի կողի լարվածային դաշտի փոփոխության կոնկրետ չափումներով:


Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս հայտնի չեն մոդելավորման այնպիսի ստենդներ, որոնց հիման վրա հնարավոր լինի գնահատել բացահանքերի կողերի վերին նիշից տարածվող բնական լեռնալանջի զանգվածից այդ կողերում առաջացող լրացուցիչ լարվածային վիճակի փոփոխությունների օրինաչափությունները: Լեռնային բացահանքերի պայմաններում բնական լեռնալանջի ազդեցությունից բացահանքի մերկացած կողի ապարային զանգվածի լարվածային դաշտի փոփոխության գնահատումը համարվում է արդիական և կարևոր խնդիր:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը: Մշակել եռառանցք ֆիզիկական մոդելավորման ստենդ, որը հնարավորություն կտա՝ գնահատելու լեռնային բացահանքի կողի վերին եզրից տարածվող բնական լեռնալանջի զանգվածից բացահանքի կողի ապարային զանգվածի մեջ խորությունից կախված՝ լրացուցիչ լարվածային ուժերի բաշխվածությունը և բարձրացնել կայունության վրա վերջիններիս հետագա ազդեցության գնահատականը:

Ֆիզիկական ծավալային մոդելավորման ստենդը: Մոդելավորման ստենդը ցույց է տրված նկ. 1-ում: Այն բաղկացած է մետաղական պրոֆիլներից պատրաստված ուղղանկյուն պրիզմայի տեսքով հիմնականախքից (1) և շարժական պրիզմայից (2): Հիմնականախքն ունի ամբարձիկների միջոցով իր երկայնական առանցքի նկատմամբ թեքվելու հնարավորություն: Հիմնականախքի (1) և շարժական պրիզմայի (2) վերին և դիմացի նիստերը բաց են, հիմնականախքի (1) հիմքը և կողերը ներսի կողմից փակված են անշարժ պատերով, հետևի պատը նույնպես անշարժ է, ընդ որում, վերջինիս հորիզոնական չափը մոտավորապես 3 անգամ մեծ է ստորին հիմնականախքի (1) բարձրությունից: Վերին շարժական պրիզմայի (2) ետին պատը փակ է, իսկ հիմքը շարժական է:

Մոդելի վերին շարժական պրիզմայի (2) հիմքի պրոֆիլի և հիմնականախքի (1) վերին պրոֆիլի վրա, համապատասխանաբար, ամրացված և՛ մետաղական թերթերով հիմնականախքը (1), և՛ վերին շարժական (2) պրիզմաները աշխատանքային դիրքում միմյանց հետ անշարժ միանում են սևեռիչների միջոցով (5): Վե-


րին շարժական պրիզմայի (2) անկյունագծային հարթությամբ և տարբեր անկյունների տակ հորիզոնական ուղղությամբ տեղաշարժվելու համար ամրացված է բնական լեռնալանջի (8) հորիզոնի նկատմամբ թեքությունը սևեռող դռնակ (4), որը հողակապով վերին շարժական պրիզմայի (2) երկարությամբ տեղաշարժվում է շարժական պրիզմայի (2) հիմքի մետաղական պրոֆիլներում բացված ճեղքերով և, անհրաժեշտության դեպքում, ամրացվում հողակապի ծայրերում տեղակայված սևեռիչներով (9) (նկ. 1):



Նկ. 1 Բնական լեռնալանջով բեռնված բացահանքի կողում լարվածությունների գրանցման մոդելավորման ստենդ. 1- ստորին անշարժ պրիզմա, 2- վերին շարժական պրիզմա, 3- անկյունակ, 4- դռնակ, 5- սևեռիչներ, 6- համարժեք նյութ, 7- բացահանքի կող, 8- բնական լեռնալանջ, 9- հողակապ սևեռիչներով, 10- տեկտոնական խզվածք

Մոդելավորման ստենդի ստորին հիմնականախքի (1) հիմքի և հետին պատի կողմնային պատերով, ինչպես նաև վերին շարժական պրիզմայի (2) հետին պատի շարժական հիմքի ու կողմնային պատերով ձևավորված ծավալները լցվում են համարժեք նյութով (6), ձևավորում են բացահանքի կողը (7) և տեկտոնական խզվածքը (10), որոնց մեջ զետեղվում են լարվածությունների գրանցման տվիչները: Ինչպես երևում է նկ. 2-ից, շարժական վերին պրիզմայի (2) շարժական հիմքի տեղաշարժ-

ման միջոցով կարգավորվում է ստորին հիմնակմախքի (1) մեջ բացահանքի կողում (7) մոդելի վերին եզրի վրա «նստած» բնական լեռնալանջի (8) երկրաչափական պատկերի բնութագրիչների ստացումը (թեքության անկյուն, լայնություն, բարձրություն):



Նկ. 2. Ստորին անշարժ պրիզմայի (1) նկատմամբ վերին շարժական պրիզմայում (2) լեռնալանջի (4) տարբեր թեքման անկյունների դեպքում տեղադիրքը. 3- անկյունակ, 4- դռնակ, 5- սևեռիչներ, 9- հողակապ սևեռիչներով

Մեր կողմից մշակված ծավալային ֆիզիկական մոդելավորման ստենդը (նկ.1) հայտնի մոդելավորման ստենդներից տարբերվում է նրանով, որ ստորին հիմնակմախքի (1) վրա, նրա հետ սևեռման հնարավորությամբ, տեղադրված է նույն լայնական կտրվածքով և հիմնակմախքի երկարությամբ տեղաշարժվող և բնական լեռնալանջի պարամետրերով զանգվածի ձևավորման շարժական հիմքով ուղղանկյուն պրիզմա (2), որի անկյունագծային հարթությամբ տարբեր անկյան տակ (3) տեղադրված բնական լեռնալանջի թեքությունը սևեռող դռնակը (4) ունի հիմքի երկարությամբ մետաղական պրոֆիլներում բացված ճեղքերով հողակապի (5) միջոցով հորիզոնական ուղղությամբ տեղաշարժման հնարավորություն, ինչը ցույց է տրված նկ. 1 և 2-ում:

Բնական լեռնալանջի (8) զանգվածով պայմանավորված՝ բեռնված բացահանքի կողում (7) գրունտների լարվածային վիճակի փոփոխության օրինաչափությունների մոդելային հետազոտություններն իրականացվում են՝ պահպանելով դրանց ներկայացվող հայտնի պահանջները: Վերջիններիս հետ կապված՝ կարևոր նշանակություն ունի համաթեք նյութի ամրության ցուցանիշների ընտրումը՝

մողեւային հետազոտություններում օգտագործելով հաստատուն չափամասերով ավազի և տեխնիկական վազելինի, պարաֆինի կամ տրանսֆորմատորային յուղերի խառնուրդները [5]: Մողեւավորման ստենդի ստորին և վերին պրիզմաներում համարժեք նյութը տեղադրվում է որոշակի բեռնվածքով և խտացվում է 15...20 սմ հաստությամբ առանձին շերտերով:

Չափումների բավարար ճշտությամբ տվյալների ստացումը պայմանավորված է մողելում համարժեք նյութի ամրապնդման պրոցեսի ավարտով: Մողեւավորման ստենդում, լարումների տեղաբաշխման կայունացման պրոցեսի ավարտից հետո, կատարվում է կողում տեղադրված տվիչների դիմադրությունների փաստացի արժեքների չափում և ստուգաճշտում:

Քաջարանի բացահանքի պայմաններում հարավարևմտյան կողի վերին եզրից տարածվող բնական լեռնալանջի ազդեցությունից (8) կողի (7) ապարային զանգվածում, ինչպես նաև վերջինիս մեջ պարփակված տեկտոնական խզվածքում (10) լարվածային վիճակի փոփոխության որոշման համար մողեւային հետազոտությունների դեպքում, սկզբում ստորին հիմնակմախքի (1) մեջ կատարվում է համարժեք նյութից (6) բացահանքի կողի ձևավորում (7): Համարժեք նյութի (6) ամրապնդման ավարտից հետո ստորին հիմնակմախքում (1) (պրիզմայում) կատարվում է բացահանքի կողի (7) մողելում և տեկտոնական խզվածքում (10) տեղադրված տվիչների փաստացի դիմադրությունների գրանցում (նկ. 1):

Մողեւավորման ստենդի վերին շարժական պրիզմայում բնական լեռնալանջի (8) մողելի ձևավորմանը զուգահեռ կատարվում է ստենդի ստորին հիմնակմախքի (1) մեջ բացահանքի կողի (7) մողելում համարժեք նյութի (6) տարբեր մակարդակներում, ինչպես նաև տեկտոնական խզվածքում (10) տեղադրված տվիչների փաստացի դիմադրությունների ցուցմունքների գրանցում, որոնց միջոցով որոշվում են լարվածությունների մեծությունները:

Մողեւավորման ստենդում տվիչների փաստացի դիմադրությունների ցուցմունքների գրանցումը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև մողելի վերին շարժական պրիզմայում (2) կոնկրետ տվյալներով ձևավորված լեռնալանջի (8) զանգվածից ստենդի ստորին հիմնակմախքի (1) մեջ համարժեք նյութից (6) ձևավորված բացահանքի կողում (7), ինչպես նաև վերջինիս մեջ պարփակված տեկտոնական խզվածքում (10) տեղադրված տվիչներին փոխանցվող ուժերը կայունանում են, և տեղի է ունենում տվիչների դիմադրությունների փաստացի արժեքների փոփոխության դադարում:

Վերևում նկարագրված հերթականությամբ կատարվում է մողեւային ստենդի ստորին հիմնակմախքում (1) համարժեք նյութից (6) ձևավորված բացահանքի կողում (7), ինչպես նաև վերջինիս մեջ պարփակված տեկտոնական խզվածքում (10) տեղադրված տվիչների ցուցանիշների գրանցում՝ մողելի վերին շարժական

պրիզմայում (2) համարժեք նյութից (6) ձևավորված բնական լեռնալանջի (8)՝ հորիզոնի նկատմամբ տարբեր թեքությունների, երկարությունների և բարձրությունների դեպքում (նկ. 2):

Վերը նկարագրված ֆիզիկական մոդելավորման աշխատանքների կատարման արդյունքում որոշվում են մոդելի վերին շարժական պրիզմայում ձևավորվող տարբեր երկրաչափական կառուցվածքներով բնական լեռնալանջի ազդեցությունից բացահանքի կողի մոդելի տարբեր շերտերում, ինչպես նաև և դրա մեջ պարփակված տեկտոնական լարվածությունների փոփոխության օրինաչափությունները: Դա հնարավորություն է տալիս՝ բարձրացնելու լեռնային բացահանքի կողում բնական լեռնալանջի ազդեցությունից լարվածությունների տեղաբաշխման օրինաչափությունների որոշման արժանահավատությունը և դրա հետ կապված՝ բացահանքի կողի կայունության որոշման հայտնի հաշվարկային մեթոդների ճշտությունը:

Մշակված ֆիզիկական մոդելավորման եռաչափ ստենդի համար 2022 թ-ին ստացվել է ՀՀ արտոնագիր № 713 Y [7]:

Եզրակացություններ.

- Մշակվել է ծավալային ֆիզիկական մոդելավորման եռաչափ ստենդ, որի միջոցով հնարավորություն է ստեղծվում՝ լեռնային բացահանքերի պայմաններում լուծելու արդիական խնդիր՝ կապված բնական լեռնալանջով բեռնված բացահանքի կողում լարվածությունների տեղաբաշխման օրինաչափությունների որոշման, գնահատման և կողի կայունության հիմնավորման մեթոդի ճշտության բարձրացման հետ:

- Ֆիզիկական մոդելավորման նոր ստենդը կարող է կիրառվել նաև սակավաթեք տարածքների վրա ձևավորվող ապարային բազմաստիճան լցակույտերում լարվածային ուժերի տեղաբաշխման և դրա հետ կապված՝ լցակույտերի ռացիոնալ պարամետրերի երկրամեխանիկական հիմնավորման աշխատանքներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Effects of the loading and unloading conditions on crack propagation in high composite slope of deep open-pit mine / **Zhiguo Chang, Qingxiang Cai Wei Zhou, et al** // Advances in Civil Engineering.- 2019.- Article ID 3168481.-11 p.
2. **Hovakimyan V.V.** Upland quarry slope stability analysis under loading effect // Forum-Contest for Young Researchers “Topical Issues of Rational Use of Natural Resources”.-St. Petersburg, Mining University, 2020.-Vol. 1.-P.341-343.
3. **Hovakimyan V.V.** In Tectonically Stressed Rock Mass the Unloading Effect on Open Pit Slope Stability// Forum-Contest for Young Researchers “Topical Issues of Rational Use of Natural Resources”.-St. Petersburg, Mining University, 2021.-Vol. 1.-P.201-203.

4. **Галустян Э.Л.** Устойчивость бортов и отвалов нагорных карьеров// Горный журнал.- 1991.- N8.-С. 27-31.
5. **Ржевский В.В., Истомин В.В., Гальперин А.М.** Геомеханика отвальных работ на карьерах.- Панюков: Недра, 1972.-124 с.
6. **Фисенко Г.Л.** Устойчивость бортов карьеров и отвалов.- М.: Недра. 1965.-378 с.
7. Արտոնագիր № 713 Կ, ՀՀ, ՄԱԴ E21C 39/00 G01N 33/00 G01N 3/00. Բնական լեռնալանջով բեռնված բացահանքի կողում լարվածությունների գրանցման մոդելավորման ստեղծ/ **Լ.Ա. Մանուկյան, Վ.Վ. Հովակիմյան և Տ.Լ. Մանուկյան.**- Ե., 2022:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 04.05.2022:

Լ.Ա. МАНУКЯН, В.В. ОВАКИМЯН

РАЗРАБОТКА СТЕНДА ТРЕХМЕРНОГО ФИЗИЧЕСКОГО МОДЕЛИРОВАНИЯ РЕГИСТРАЦИИ НАПРЯЖЕНИЙ В НАГРУЖЕННОМ ЕСТЕСТВЕННЫМ СКЛОНОМ БОРТУ НАГОРНОГО КАРЬЕРА

Разработана конструкция стенда объемного физического моделирования для изучения закономерностей распределения напряжений в борту нагорного карьера, вызванного естественным склоном горы распространяющегося выше верхней бровки нагорно-высотного карьера. Стенд может быть также использован для определения напряжений в многоярусном породном отвале, сформированном на слабонаклонном основании местности, что позволяет геомеханически обосновать рациональные параметры отвала.

Получен патент РА за № 713 Կ за разработанный стенд объемного физического моделирования регистрации напряжений в борту нагорного карьера.

Ключевые слова: естественный склон горы, нагруженный борт карьера, стенд физического объемного моделирования, породный многоярусный отвал, подвижная и неподвижная призмы.

L.A. MANUKYAN, V.V. HOVAKIMYAN

DEVELOPING A 3D PHYSICAL MODELING STAND TO RECORD STRESSES IN NATURAL-MOUNTAIN-LOADED OPIN-PIT WALL

A 3D physical modeling stand has been developed to study the redistributed stress field and pattern consistency of the stresses in the exposed open-pit wall on the mountain terrain due to natural unexposed slope of the mountain above the crest of the wall under loading conditions. In such a geotechnical analysis, the modeling stand can also be used to determine the rational parameters of the multistage waste rock dumps or stockpile structures constructed on shallow terrain, as well as in hard topographical conditions, based on the assessments of the redistributed stress field due to each depositing layers.

The above-mentioned 3D physical modeling stand to define the stresses in natural-mountain-loaded open-pit wall have been certified as a patent by RA Intellectual Property Agency of № 713 Կ.

Keywords: natural mountain slope, open-pit wall in loading conditions, 3D physical modeling stand, multistage waste rock dump and stockpile, mobile and immobile prisms.

Գ.Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ

ԲԱՑԱՀԱՆՔԵՐՈՒՄ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՊԱՅԹԵՑՄԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ
ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Բացահանքերում ապարների նախապատրաստումը՝ հանույթի պայթեցմամբ, մշտապես ուղեկցվում է այնպիսի բացասական երևույթներով, ինչպիսինք են գազի և փոշու գոյացումը, օդային և սեյսմային ալիքների առաջացումը, ինչպես նաև պայթեցված ապարների առանձին կտորների անկառավարելի թռիչքը: Այս կապակցությամբ բացահանքերում զանգվածային պայթեցումներ իրականացնելիս պահանջվում է հանքավայրի շրջանում սահմանափակել պայթեցման վերը թվարկված ներգործությունները: Առաջարկվել է պայթեցման բացասական ներգործությունների նվազեցման նոր տեխնոլոգիա՝ լիցքի խոռոչի պատին պայթուցիկ նյութի գազագոյացման արգասիքի սահմանային ճնշման փոքրացման ճանապարհով: Արամուսի բացահանքի օրինակով դիտարկվել է ապարի մանրացվածության աստիճանի կարգավորման և պայթեցման բացասական ներգործության նվազեցման հնարավորությունը:

Առանցքային բառեր. բացահանք, սեյսմային ալիք, պայթեցման գազագոյացման արգասիք, ապարի թռիչք:

Ներածություն: Լեռնային արդյունաբերության զարգացման հիմքում ընկած է օգտակար հանածոյի հանույթի ծավալների մեծացումը: Պինդ օգտակար հանածոյի հանքավայրերի բաց եղանակով մշակումն ապահովում է հանույթի մեծ ծավալներ, ինչը պայմանավորված է բացահանքերում լեռնային ապարները զանգվածային պայթեցմամբ հանույթը նախապատրաստելու, հանութաբարձիչ հզոր սարքավորումները և բեռնափոխադրող տրանսպորտային միջոցները համալիր կիրառելու լայն հնարավորություններով:

Մակայն բացահանքերում պինդ լեռնային ապարների զանգվածային պայթեցումներն ուղեկցվում են բացահանքի և նրան հարող տարածքների վրա բացասական ներգործություններով:

Ակնհայտ է, որ բացասական ներգործության հիմնական գործոնը կիրառվող պայթուցիկ նյութի (ՊՆ) լիցքի քանակն է: Հայաստանի Հանրապետությունում շինանյութի՝ բացահանքերում զանգվածային պայթեցման դեպքում կիրառվող ՊՆ-ի քանակը հասնում է մոտավորապես մեկ և ավելի տասնյակ տոննաների, իսկ մետաղական բացահանքերում՝ 80 և ավելի տոննայի: Պայթեցման աշխատանքների փորձը ցույց է տվել, որ 1 տ ՊՆ-ի պայթեցման դեպքում առաջացած

մինչև 0...150 *մկմ* հատիկայնությամբ փոշու քանակը, կախված պայթեցման պարամետրերից, տատանվում է 40...250 *կգ* սահմաններում:

Արդյունքում բացահանքերում զանգվածային պայթեցումներն ուղեկցվում են հսկայական քանակով գազի և փոշու արտանետմամբ, սեյսմային, օդային հարվածային ալիքի ներգործությամբ, պայթեցված ապարների առանձին կտորների շարժմամբ:

ՀՀ բացահանքերում իրականացվող զանգվածային պայթեցման դեպքում պայթեցման ծավալները, կիրառվող ՊՆ-ի, արտանետվող գազի և փոշու քանակները տատանվում են աղ. 1-ում բերված սահմաններում:

Աղյուսակ 1

Զանգվածային պայթեցման դեպքում ՊՆ-ի և արտանետվող գազի և փոշու քանակները

Բացահանքեր	ՊՆ-ի քանակը	Հանույթի ծավալները	Արտանետվող գազի և փոշու քանակը
Մետաղական	50...100 <i>տ</i>	200 000... 400 000 <i>տ</i>	7,0...13,0 <i>տ</i>
Ոչ մետաղական	5...20 <i>տ</i>	10 000...40 000 <i>մ³</i>	0,6...1,5 <i>տ</i>

Շինանյութերի՝ բացահանքերում իրականացվող զանգվածային պայթեցման միջին ճեղքավորվածության, $f = 8...10$ ամրությամբ ապարներում, 5...10 *տ* ՊՆ-ի լիցքի զանգվածային պայթեցման դեպքում, կախված օդերևութաբանական պայմաններից, փոշեգազային ամպը տարածվում է 15...20 *քառակուսի մետր*, որում թունավոր գազային խառնուրդի պարունակությունը կազմում է 5...10% [1]: Փոշեգազային ամպի բարձրությունը կազմում է մոտավորապես 30...60 *մ*, իսկ տարածման հեռավորությունը՝ 200...400 *մ*: Հաստատվել է, որ ՊՆ-ի տեսակարար ծախսի մեծացման հետ մեծանում է մթնոլորտ արտանետվող թունավոր գազերի ծավալը [2]:

Հանքաքարային հանքավայրերի բաց եղանակով մշակման դեպքում բացասական ներգործությունները պայմանավորված են ոչ միայն պայթեցման հետևանքով առաջացող փոշեգազային արտանետումներով, այլև հողային ռեսուրսների խախտմամբ: Օրինակ, 1 *մլն տ* հանքաքարի արդյունահանման դեպքում խախտվում է ավելի քան 500 *հազ. հա* հողային ռեսուրս [3, 4]:


Խախտված հողերի մակերեսների կրճատումը հնարավոր է բացահանքի աշխատանքային հրապարակի լայնքի սահմանափակմամբ՝ ի հաշիվ պայթեցված զանգվածի փլվածքի լայնքի նվազեցման [5]: Վերջինիս նվազեցումը հնարավոր է ՊՆ-ի տեսակարար ծախսի փոքրացման դեպքում [4]:

Դժվար չէ նկատել, որ զանգվածային պայթեցման բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կախված է ՊՆ-ի տեսակարար ծախսի մեծությունից, որի նվազեցումը չի կարող ապահովել պայթեցման որակ, ինչը կնվազեցնի

հանությային աշխատանքների տնտեսական արդյունավետությունը: Անհրաժեշտ է ՊՆ-ի նվազագույն տեսակարար ծախսով ապահովել պայթեցման որակ, որը կպահանջի պայթեցման էներգիայի կարգավորման նոր տեխնոլոգիայի մշակում:

Ուստի բացահանքերում զանգվածային պայթեցումների դեպքում պայթեցման էներգիայի կարգավորման նոր տեխնոլոգիայի մշակումը, որը թույլ կտա ՊՆ-ի նվազագույն տեսակարար ծախսով բացահանքի աշխատանքային հրապարակում ապահովել անհրաժեշտ մանրացվածությամբ պայթեցված զանգվածի կոմպակտ փլվածք և սահմանափակել պայթեցման բացասական ազդեցությունը բացահանքի շրջանում, հանդիսանում է արդիական խնդիր:

Խնդրի դրվածքը և հետազոտության մեթոդները: Փոշու և գազի առաջացման գործընթացը որոշվում է գազառաջացման արգասիքի ճնշման մեծությամբ: Պայթեցման սկզբնական փուլում գազազոյացման արգասիքի ճնշումը, մոտավորապես 100 անգամ գերազանցելով ապարի ամրության սահմանը, ՊՆ-ի լիցքի շուրջ առաջացնում է պայթեցման էներգիայի ցրումային գազերի տեսքով և զանգվածի որոշակի ծավալով գերմանրացում, որը հանդիսանում է փոշու առաջացման աղբյուր: Իսկ ՊՆ-ի լիցքից որոշակի հեռավորության վրա տեղի է ունենում պայթեցված զանգվածի կանոնակարգված մանրացում: Կանոնակարգված մանրացման գործընթացն ավարտվում է, երբ գազազոյացման արգասիքի ճնշումը դառնում է ավելի փոքր, քան ապարի ամրության սահմանը, և սկսվում է պայթեցված հանքաստիճանի առանձին տարրերի տեղաշարժման և փլվածքի ձևավորման գործընթացը, որն ուղեկցվում է փոշու զգալի քանակի արտանետմամբ (նկ. 1):



Նկ. 1. Պայթեցված զանգվածի՝ դեպի ազատ մակերևույթ տեղաշարժման և փլվածքի ձևավորման գործընթացը.

1 - գերմանրացման գոտի, 2 - մանրացված ապարներ, 3 - փոշեգազային ամպ

Վերը շարադրվածից հետևում է, որ առաջադրված խնդրի լուծման գլխավոր նպատակն է նվազեցնել ապարների գերմանրացման վրա ծախսվող և ցրումային կորուսների էներգիան: Սա նշանակում է մեծացնել պայթեցման էներգիայի ակտիվ գործունեության տևողությունը ապարի կանոնակարգված մանրացման համար:

Պայթեցման ժամանակ զագագոյացման արգասիքի ճնշման և ապարի գերմանրացման գոտու շառավղի մեծությունները կախված են ՊՆ-ի դետոնացման արագությունից և խտությունից և որոշվում են համապատասխանաբար հետևյալ արտահայտություններով [6].

$$P_0 = \frac{1}{8} \rho_{\text{բբ}} D_{\text{բբ}}^2, \quad \eta w, \quad (1)$$

$$R_n = d_{\text{ԿԿ}} D_{\text{բբ}} \sqrt{\frac{\rho_{\text{բբ}} K_n}{8 \sigma_{\text{ԿՃ}}}}, \quad u, \quad (2)$$

որտեղ $D_{\text{բբ}}$ -ն ՊՆ-ի դետոնացման արագությունն է, u/u_0 ; $\sigma_{\text{ԿՃ}}$ -ն՝ ապարի ամրության սահմանը սեղմման դեպքում, ηw ; $\rho_{\text{բբ}}$ -ն՝ ՊՆ-ի խտությունը, $h q/u^2$; K_n -ն՝ հարվածային ալիքի բեկման գործակիցը լիցքի խոռոչից ապարի անցման միջակայքում; $d_{\text{ԿԿ}}$ -ն՝ հորատանցքի տրամագիծը, u :

(1) և (2) արտահայտություններից երևում է, որ պայթեցման դեպքում արտանետվող փոշու քանակի և ապարի գերմանրացման գոտու շառավղի սահմանափակումը կախված է ՊՆ-ի դետոնացման արագությունից և խտությունից:

Պայթեցման գործընթացի կարգավորումը զանգվածային պայթեցման դեպքում բնութագրվում է պայթեցման էներգետիկ և տեխնոլոգիական պարամետրերով.

Պայթեցման էներգետիկ պարամետրերն են.

- պայթեցման իմպուլսի մեծությունը,
- ապարի քայքայման վրա պայթեցման էներգիայի գործունեության տևողությունը:

Պայթեցման տեխնոլոգիական պարամետրերն են.


- ՊՆ-ի տեսակարար ծախսի մեծությունը՝ արտահայտված պայթեցվող բլոկում հորատանցքային ցանցի պարամետրերով և ՊՆ-ի լիցքի երկարությամբ (պայթեցվող բլոկում ՊՆ-ի լիցքի բաշխվածությամբ),

- պայթեցման սխեմայի ընտրությունը (միաժամանակ պայթող լիցքերի դասավորությունը հանքաստիճանի ազատ մակերևույթի նկատմամբ):

Պայթեցման իմպուլսը հորատանցքի պատին ստեղծում է զագագոյացման արգասիքի հզոր ճնշում, որը նվազում է ակնթարթորեն, և ապարի քայքայման վրա պայթեցման էներգիայի գործունեության տևողությունը դառնում է անհամեմատ

փոքր: Այսինքն ապարի քայքայման վրա պայթեցման էներգիայի գործունեության տևողության մեծացումը հանդիսանում է ոչ պակաս կարևոր գործընթաց ապարների կանոնակարգված քայքայման դեպքում, որի մեծացումը հնարավոր է ՊՆ-ի գազագոյացման արգասիքի սահմանային ճնշման կարգավորմամբ:

Իսկ հորատանցքային ցանցի պարամետրերի ընտրությունը կախված է պայթեցման էներգետիկ պարամետրերից և արտահայտվում է պայթեցման էներգիայի դիսիպացիոն կորուստների և գերմանրացման գոտու շառավղի նվազեցմամբ, որը իր հերթին կախված է ՊՆ-ի գազագոյացման արգասիքի սահմանային ճնշման օպտիմալ մեծությունից: Վերը շարադրվածից հետևում է, որ պայթեցման տեխնոլոգիական պարամետրերի ընտրումը խիստ կախված է պայթեցման էներգետիկ պարամետրերի մեծությունից (նկ. 2):



Նկ. 2. Հանքաստիճանային բլոկի պայթեցման առաջարկվող տեխնոլոգիան.
ա) հորատանցքերի դասավորությունը և պայթեցման սխեման՝ 1,2,3...130 - պայթեցվող հորատանցքերի համարները, բ) ՊՆ-ի հորատանցքային լիցքի կառուցվածքը և դրա դասավորությունը պայթեցվող բլոկում՝ 1 - խցանյութ, 2 - անֆո+ՓՊ

ՊՆ-ի գազագոյացման արգասիքի սահմանային ճնշման մեծությունը որոշվում է հետևյալ պայմանից.

$$10^{\sigma_{c\pi c}} < P_0 > \sigma_{c\pi c} : \quad (3)$$

Նշված միջակայքում մեծանում է ապարի քայքայման վրա ծախսվող էներգիան: Ուստի պայթեցման էներգիայի կարգավորման նոր տեխնոլոգիայի մշակումը, որը պայթեցման նվազագույն բացասական ներգործության սահմաններում կապահովի անհրաժեշտ մանրացվածությամբ կոմպակտ փլվածքով պայթեցված լեռնային զանգված, պահանջում է [7].

- մշակել ՊՆ-ի լիցքի նոր կառուցվածք՝ փոքր դետոնացման արագությամբ և խտությամբ օժտված պայթուցիկ նյութերի կիրառմամբ, որը կապահովի ՊՆ-ի գազագոյացման արգասիքի սահմանային ճնշում նշված միջակայքում,

- համաձայն մշակված ՊՆ-ի լիցքի նոր կառուցվածքի՝ որոշել ՊՆ-ի լիցքի բաշխվածությունը պայթեցվող բլոկում (ըստ հորատանցքային ցանցի պարամետրերի և խցանյութի երկարության),

- ընտրել կարճ դանդաղեցմամբ պայթեցման սխեման:

ՊՆ-ի լիցքի նոր կառուցվածքում կիրառվում է անֆոյի (NH_4NO_3 +դիզ.վառելիք) և գնդիկավոր փրփրապոլիստիրոլի (ՓՊ) խառնուրդ, որը թույլ է տալիս ապահովել հորատանցքում ՊՆ-ի լիցքի անհրաժեշտ երկարություն՝ ի հաշիվ փրփրապոլիստիրոլի փոքր ծավալային կշռի:

ՓՊ-ի քանակը խառնուրդում հաշվարկվում է $\Phi\Pi/\text{Անֆո} = 0.0085$ հարաբերությամբ:

ՊՆ-ի և խառնուրդի տեխնիկական բնութագիրը բերված է աղ. 2-ում:

Աղյուսակ 2

ՊՆ-ի և խառնուրդի տեխնիկական բնութագրերը

Փրփրապոլիստիրոլի ֆիզիկամեխանիկական հատկություններ				
Ծավալային կշիռը, կգ/մ ³	Ամրության սահմանը՝ ըստ սեղմման, կգ/սմ ²	Օդի պարունակությունը, %	Հատիկայնությունը, մմ	Ամրության սահմանը՝ ըստ ստատիկ ծռման, կգ/սմ ²
15...20	2,3	98	3...10	2,0...2,5
Պայթուցիկ նյութի և խառնուրդի տեխնիկական բնութագիրը				
Պայթուցիկ նյութ	Խտությունը, կգ/մ ³	Դետոնացման արագությունը, մ/վ	Գազագոյացման արգասիքի ճնշումը, ՄՊա	
Անֆո	820	3000...3600	1184,9	
Անֆո+ՓՊ	620	2800...3200	697,5	

Գնդիկավոր ՓՊ-ի առկայությունը (օդային բացակների առկայությունը) խառնուրդում փոքրացնում է ՊՆ-ի խտությունը, որի փոքրացմանը զուգընթաց նվազում է ՊՆ-ի դետոնացման արագությունը: Արդյունքում նվազում է պայթեցման զագագոյացման արգասիքի ճնշումը, որը մեծացնում է պայթեցման էներգիայի գործունեության տևողությունը ապարի մանրացման վրա և խցանյութի գոտում ապահովում է պայթեցված զանգվածի առանձին կտորների նվազագույն թոփը [4]:

Պայթեցման պարամետրերի ընտրությունն իրականացվում է հետևյալ սկզբունքով: Պայթեցվող հանքաստիճանային բլոկի ելակետային ցուցանիշներին և կիրառվող ՊՆ-ի տեխնիկական պարամետրերին համապատասխան (աղ. 3), կատարվում է հորատապայթեցման աշխատանքների պարամետրերի հաշվարկ (աղ. 4), համաձայն [8, 9]-ի: Ըստ հաշվարկված հորատանցքային ցանցի պարամետրերի՝ կատարվում է հորատանցքերի հորատում ուղղանկյունաձև դասավորությամբ, ընդ որում, առաջին շարքի հորատանցքերը հորատվում են հանքաստիճանի շեպի թեքությանը զուգահեռ, իսկ երկրորդ և մյուս շարքերում՝ մակերևույթի նկատմամբ ուղղահայաց դասավորվածությամբ:

Աղյուսակ 3

Պայթեցվող հանքաստիճանային բլոկի ելակետային ցուցանիշները և կիրառվող ՊՆ-ի տեխնիկական պարամետրերը

Պայթեցվող միջավայրի և կիրառվող ՊՆ-ի տեխնիկական բնութագիրը	
Զանգվածի ճեղքավորվածության աստիճանը հաշվի առնող գործակիցը	K_T
Ապարի ամրությունը՝ ըստ Մ.Մ. Պրոտոդյակոնովի	f
Երկայնական ալիքի տարածման արագությունը ապարում, u/l	$V_{այ}, u/l$
Պայթեցվող բլոկի ակուստիկ կոշտությունը, kq/u^2l	$\sqrt{A}(\gamma_n \times v_n)$
Ապարի ծավալային կշիռը, kq/u^3	γ_n
Ապարի ամրության սահմանը՝ ըստ սեղմման, $U_{\text{Պա}}$	$\sigma_{\text{сж}}$
Ապարի ամրության սահմանը՝ ըստ ձգման, $U_{\text{Պա}}$	$\sigma_{\text{раc}}$
Պուասոնի գործակիցը	μ
Յունգի մոդուլը, Պա	$E = \frac{\gamma_d^2}{1 - \mu} (1 - 2\mu)(1 + \mu)\gamma_d$
Հանքաստիճանի բարձրությունը, l	H_y
Հանքաստիճանի թեքման անկյունը, աստ.	φ
Անվտանգության գոտի	c
ՊՆ-ի դետոնացման արագությունը, u/l	D_{BB}
ՊՆ-ի խտությունը, kq/u^3	ρ_{BB}
Խցանյութի հատիկայնությունը հաշվի առնող գործակիցը	K
Բզդենտրոպի գործակիցը	$\gamma_{\text{нз}}$

Հորատանցքերը լիցքավորվում են պայթուցիկ նյութի և փրփրապոլիստիրոլի խառնուրդով: Հորատանցքերի չլիցքավորված մասը ծածկվում է խցանյութով՝ 10...20% խոնավության կավային կամ ավազակավային ապարներով:

ՊՆ-ով հորատանցքային լիցքերի պայթեցումն իրականացվում է սեպաձև ներհատումով կարճ դանդաղեցմամբ պայթեցման սխեմայով:

Աղյուսակ 4

Հորատապայթեցման աշխատանքների պարամետրերի հաշվարկը

Հորատապայթեցման պարամետրերը	Հաշվարկման բանաձևերը
Հորատանցքի տրամագիծը, u	$d_{\text{CK}} = \frac{H_y \text{ ctg } \alpha + c}{53 K_m} \sqrt{\frac{\gamma_n}{\rho_{\text{եթ}}}}$
ՊՆ-ի գազագոյացման արգասիքի սկզբնական ճնշումը հորատանցքի պատին, $U_{\text{Պա}}$	$P_0 = \frac{1}{8} \rho_{\text{եթ}} D_{\text{եթ}}^2$
Հանքաստիճանի հիմքի դիմադրության գիծը, u	$w = 53 K_{\text{ն}} d_{\text{ն}} \sqrt{\frac{\rho_{\text{ալ}}}{\gamma_d}}$
Հորատանցքային ցանցի պարամետրերը, u	$a = b = 2 d_{\text{CK}} \sqrt{\frac{\rho_o}{k_m \sigma_{\text{pac}}}}$ $k_m = 1 + (2 \gamma_{\text{uz}} P_o) \frac{1 + \mu}{E}$
Հորատանցքի երկարությունը, u	$l_{\text{CK}} = 1,1 \cdot H_y$
Խցանյութի երկարությունը, u	$l_{\text{աճ}} = \frac{K_3 d_{\text{CK}} H_y}{a \sqrt[3]{f}} \sqrt{\frac{\rho_{\text{BB}} D_{\text{BB}}}{2 \sigma_{\text{pac}}}}$
ՊՆ-ի լիցքի երկարությունը, u	$l_{\text{աբ}} = l_{\text{CK}} - l_{\text{աճ}}$
ՊՆ-ի լիցքի քանակը, q	$Q = 0,785 l_{\text{աբ}} d_{\text{CK}}^2 \rho_{\text{եթ}}$
Պայթեցման դանդաղեցումների տևողությունը, $u/լ$	$\tau_3 = \frac{a^2 \gamma_{\text{II}}}{2,5 d_{\text{CK}} \rho_{\text{BB}} D_{\text{BB}}}$
ՊՆ-ի տեսակարար ծախսը, $q/ւ^3$	$q = \frac{Q}{awHy}$
Պայթեցված զանգվածի ծավալը 1 u հորատանցքի պայթեցման դեպքում, $ւ^3/ւ$	$V_{\text{r.m.}} = \frac{a \cdot Hy (W + a (np - 1))}{np l_{\text{CK}}}$
Գազի և փոշու արտանետման հեռավորությունը, u	$R_z = 160 \sqrt[3]{\frac{Q}{\sigma_{\text{ու}}}} (1 + 0,5 V_{\text{ե}})$ $V_{\text{ե}}$ -քամու արագությունը, $ւ/լ$
Մեյսմային ներգործության անվտանգ հեռավորությունը, u	$R_c = 10 \sqrt[3]{\frac{Q \sigma_{\text{ու}}}{N}}$ N -դանդաղեցումների թիվը
Մթնոլորտ արտանետվող թունավոր գազերի քանակը, $լ/կգ$	$C = \frac{C_o}{1 + \frac{0,27}{q}}$ C_o -թունավոր գազերի տեսակարար ծավալը; անֆոյի պայթեցման դեպքում $C_o = 60...70 լ/կգ$

Սեղանաձև պայթեցման սխեման թույլ է տալիս ունենալ պայթեցման այն-պիսի ուղղվածություն, որը հատում է հանքաստիճանի ազատ մակերևույթը որոշակի անկյան տակ, որի մեծության փոփոխությունը նվազեցնում է պայթեցված ապարի թռիչքը դեպի հանքաստիճանի ազատ մակերևույթ՝ արդյունքում ապահովելով սահմանափակ լայնքով պայթեցված զանգվածի փլվածք:

Հետազոտության արդյունքները: Առաջարկված տեխնոլոգիան կիրառվել է Արամուսի բացահանքում՝ ներկայացված $f = 10 \dots 12$ ամրության, $\gamma_n = 2,550 \dots 2,850$ տ/մ³ ծավալային կշռով միջին ճեղքավորվածության բազալտներով: Որպես պայթուցիկ նյութ կիրառվել է անֆո+ՓՊ խառնուրդը, որի տեխնիկական բնութագիրը բերված է աղ. 1-ում:

Հորատապայթեցման աշխատանքների պարամետրերը հաշվարկվել են՝ համաձայն աղ. 3-ում բերված պայթեցման հաշվարկային բանաձևերի: Հաշվարկման համար ելակետային ցուցանիշներն են հանդիսացել պայթեցվող բլոկի երկրամեխանիկական հատկությունները, ամրության բնութագիրը և կառուցվածքային առանձնահատկությունները: Հանքաստիճանային բլոկի պայթեցման առաջադրված տեխնոլոգիան բերված է նկ. 2-ում: ՊՆ-ի լիցքի կառուցվածքը և դրա դասավորությունը հանքաստիճանային բլոկում կատարվել են՝ համաձայն նկ. 2բ-ի: Ի տարբերություն գործող տեխնոլոգիայի՝ հորատանցքերի առաջին շարքը հորատվել է հանքաստիճանի շեպի թեքությանը զուգահեռ (նկ. 2բ), որի դասավորությունը հանքաստիճանային բլոկում կատարվել է՝ համաձայն աղ. 4-ի: Ընտրվել է սեղանաձև ներհատումով պայթեցման սխեման (նկ. 2ա):

Որպես պայթեցման արդյունքների գնահատման չափանիշներ ընդունվել են պայթեցման փաստացի տեխնոլոգիական և հաշվարկային էկոլոգիական ցուցանիշները (աղ. 5):

Պայթեցման փաստացի տեխնոլոգիական ցուցանիշներն են. պայթեցված զանգվածի փլվածքի պարամետրերը (փլվածքի լայնքը, բարձրությունը), պայթեցված զանգվածի կոնդիցիոն ($d = 20 \dots 800$ մմ) և ոչ կոնդիցիոն չափաբաժինների ելքը ($d < 20$ մմ, $d > 800$ մմ):

Պայթեցման հաշվարկային էկոլոգիական ցուցանիշներն են.

գազի և փոշու արտանետման հեռավորությունը, սեյսմային ներգործության անվտանգ հեռավորությունը, մթնոլորտ արտանետվող փոշեգազային ամպի, թունավոր գազի ծավալները:

Պայթեցված զանգվածի ոչ կոնդիցիոն չափաբաժինների ելքը որոշվել է ֆոտոգծային եղանակով, իսկ պայթեցված զանգվածի փլվածքի պարամետրերը՝ մարկշեյդերական չափագրման միջոցով:

Պայթեցման արդյունքների վերլուծությունը վկայում է, որ առաջարկված պայթեցման տեխնոլոգիան հնարավորություն է տալիս.

- նվազեցնել պայթեցված ապարների թռիչքի հեռավորությունը և կարգավորել պայթեցված զանգվածի փլվածքի լայնքը,
- նվազեցնել ՊՆ-ի տեսակարար ծախսի մեծությունը, որն իր հերթին ապահովում է պայթեցումից առաջացած փոշեգազային ամպի և մթնոլորտ արտանետվող թունավոր գազերի թուլատրելի քանակները,
- փոքրացնել ոչ կոնդիցիոն չափաբաժինների ելքը (արտաչափս կտորների ելքը նվազում է 2,2 անգամ, գերմանրացված զանգվածի ելքը՝ 1,75 անգամ):

Աղյուսակ 5

Հորատապայթեցման պարամետրերը և պայթեցման արդյունքները Արամուսի բացահանքի պայմաններում

Պայթեցվող միջավայրի և կիրառվող ՊՆ-ի տեխնիկական բնութագրերը			
Ճեղքավորվածության աստիճանը.			միջին ճեղքավորվածությունը
K _τ	Զանգվածի ճեղքավորվածությունը բնութագրող գործակիցը	1,0	
f	Ապարի ամրությունը՝ ըստ Մ.Մ. Պրոտոդյակոնովի	10...12	
V	Երկայնական ալիքի տարածման արագությունը ապարում, մ/վ	3800	
C	Պայթեցվող բլոկի ակուստիկ կոշտությունը, կգ/մ ² վ	5,2*10 ⁶	
γ _π	Ապարի ծավալային կշիռը, կգ/մ ³	2600	
σ _c	Ապարի ամրության սահմանը՝ ըստ սեղմման, ՄՊա	70...90	
σ _p	Ապարի ամրության սահմանը՝ ըստ ձգման, ՄՊա	12...23	
μ	Պուասոնի գործակիցը	0,23	
E	Յունգի մոդուլը, Պա	3,4*10 ¹⁰	
H _y	Հանքաստիճանի բարձրությունը, մ	10	
α	Հանքաստիճանի թեքման անկյունը, աստ.	75...80	
	Կիրառվող ՊՆ-ի տեսակը	Անֆո	Անֆո+ՓՊ
ρ _κ	Պայթուցիկ նյութի խտությունը, կգ/մ ³	820	620
Po	ՊՆ-ի լիցքի գազագոյացման արգասիքի ճնշումը, ՄՊա	1184, 9	697,5
K ₃	Խցանյութի տեսակը հաշվի առնող գործակից	1,0...1,3	
Պայթեցման հաշվարկային պարամետրերը և պայթեցման արդյունքները			Պայթեցման տեխնոլոգիան
			Գործող Առաջարկվող
D _{св}	Հորատանցքի տրամագիծը, մ	0,140	0,140
axb	Հորատանցքային ցանցի պարամետրերը, մ	3,2x 3,2	3,2x 3,2
W	Հիմքի դիմադրության գիծը, մ	4,5	4,0
b ₁	I և II շարքերի միջև եղած հեռավորությունը, մ	-	0,6

Աղյուսակ 5-ի շարունակությունը

$I_{\text{заб}}$	Խցանյութի երկարությունը, մ	3,2	2,7
L_{CKB}	Հորատանցքի երկարությունը, մ	11	11
$I_{\text{зап}}$	ՊՆ-ի լիցքի երկարությունը հորատանցքում, մ	7,8	8,3
Q	ՊՆ-ի լիցքի քանակը հորատանցքում, կգ	98,4	79,2
Պայթեցման սխեման		Սեպաձև ներհատումով	Սեպաձև ներհատումով
τ_3	Դանդաղեցման տևողությունը, մվ	17	42
q_{BB}	ՊՆ-ի տեսակարար ծախսը, կգ/մ^3	0,90	0,76
q_{nn}	ՓՊ-ի տեսակարար ծախսը, կգ/մ^3	-	0,0065
n_{CK}	Հորատանցքերի թիվը	130	130
n_p	Շարքերի թիվը	5	5
$Q_{\text{сбл}}$	ՊՆ-ի ընդհանուր քանակը, կգ	12800	10,300
$V_{\text{г.м.}}$	Պայթեցված զանգվածի ծավալը 1 մ հորատանցքի պայթեցման դեպքում, $\text{մ}^3/\text{մ}$	10,1	9,8
Պայթեցման փաստացի տեխնոլոգիական ցուցանիշները			
Պայթեցված զանգվածի ելքը՝ ըստ չափաբաժինների, %		Գործող	Առաջարկվող
	Գերմանրացված զանգվածը՝ $d < 50 \text{ մմ}$	21,5	12,3
	Արտաչափս կտորները՝ $d > 800 \text{ մմ}$	11,8	5,3
B_p	Պայթեցված զանգվածի փլվածքի լայնքը, մ	36,0	28,0
H_p	Պայթեցված զանգվածի փլվածքի բարձրությունը, մ	5,5	7,0
Պայթեցման հաշվարկային էկոլոգիական ցուցանիշները			
R_r	Գազի և փոշու արտանետման հեռավորությունը, մ : Քամու առկայության դեպքում՝ $V_B = 2 \text{ մ/վ}$:	370	340
$Q_{\text{п.г}}$	Մթնոլորտ արտանետվող գազի և փոշու քանակը, կգ : Փոշու և գազի արտանետման թույլատրելի նորմը:	740	680
		965	772
		900	
R_c	Սեյսմային ներգործության անվտանգ հեռավորությունը, մ	90	84
c	Մթնոլորտ արտանետվող թունավոր գազի քանակը, լ/կգ : Թունավոր գազի արտանետման թույլատրելի նորմը:	52	46
		50	

Եզրակացություն.

1. ՊՆ-ի լիցքի կառուցվածքի փոփոխությունը թույլ է տալիս կարգավորել պայթեցման գազագոյացման արգասիքի ճնշումը ապարի սահմանային ամրության անհրաժեշտ միջակայքում, որը մեծացնում է պայթեցման գործընթացի տևողությունը ապարի կանոնակարգված մանրացման դեպքում, նվազեցնում է պայթեցման էներգիայի դիսիպացիոն կորուստները և կրճատում գերմանրացման գոտու շառավիղը:

2. Հորատանցքային ցանցի պարամետրերի ընտրությունը կախված է պայթեցման էներգետիկ մեծություններից, որոնց կարգավորումը հնարավոր է իրականացնել հորատանցքային լիցքի կառուցվածքի փոփոխմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Дубнов Л.И., Бахаревич Н.С., Романов А.И.** Промышленные взрывчатые вещества.– 2-е изд., перераб. доп.– М.: Недра, 1982.- 327с.
2. **Блейман И.Л., Гунченко А.И., Кантор В.Х., Смирнов В.В.** Расчет газоопасных зон при взрывах зарядов выброса // Сб. АН Киргизской ССР / Институт физики и механики горных пород.- Фрунзе, 1980.- С. 97-104.
3. **Мосинец В.Н., Абрамов А.В.** Разрушение трещиноватых и нарушенных горных пород.- М.: Недра, 1982.- 248 с.
4. **Анистратов Ю.И.** Технология открытой добычи руд редких и радиоактивных металлов.- М.: Недра, 1988.- 430 с.
5. **Агаронян Г.А., Агаронян А.Г.** Моделирование процесса перемещения и формирования развала взорванной горной массы при взрыве в трещиноватой среде // Вестник Национального политехнического университета Армении: Металлургия, материаловедение, недропользование.- Ереван, 2018.– N1.- С.84-95.
6. **Ефремов Э.И.** Управление размерами зон переизмельчения горных пород при их взрывном разрушении // Вестник КТУ: Сб. наук. Праць.- Кривой Рог, 2007.– Вып. 18.- С. 36-39.
7. **Агаронян Г.А., Акопян Л.С., Агаронян А.Г.** Регулирование степени дробления взорванной горной массы при разработке месторождений нерудных строительных материалов // Известия НАН Армении и НПУА. Серия “Технические науки”.- 2019.– Т.72, N1.- С. 26-36.
8. **Крюков Г.М., Докутович М.И., Жаровонко С.Н.** Степень дробления и выхода негабарита при взрывном рыхлении горных пород на карьерах // ГИАБ.- 2011.- N5.- С. 347-351.
9. Технические правила ведения взрывных работ на дневной поверхности.– М.: Недра, 1972.- 240 с.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 25.01.2022:

Г.А. АГАРОНЯН

ТЕХНОЛОГИЯ УМЕНЬШЕНИЯ НЕГАТИВНОГО ВОЗДЕЙСТВИЯ МАССОВОГО ВЗРЫВА НА КАРЬЕРАХ

Взрывная подготовка горной породы к выемке на карьере всегда сопровождается такими негативными явлениями, как выделение пыли и газов, образование воздушной и сейсмической волн, а также неуправляемый разлет отдельных кусков взорванной породы. В этой связи при проведении массовых взрывов на карьере требуется ограничить вышеперечисленные негативные воздействия взрыва в районе месторождения. Предложена новая технология по снижению негативного воздействия взрыва путем уменьшения предельного давления газообразных продуктов взрывчатых веществ на

стенке зарядной полости. На примере Арамусского карьера рассмотрена возможность регулирования степени дробления породы и снижения негативного воздействия взрыва.

Ключевые слова: карьер, сейсмическая волна, газообразные продукты взрыва, разлет породы.

G.A. AHARONYAN

A TECHNOLOGY TO REDUCE THE NEGATIVE EFFECT OF A MASS EXPLOSION ON OPEN PITS

The explosive preparation of rock for excavation at the open pit is always accompanied by such negative phenomena as the release of dust and gases, the formation of air and seismic waves, as well as the uncontrolled scattering of separate pieces of exploded rock. In this regard, when carrying out mass explosions at an open pit, it is necessary to limit the on above-mentioned negative effects of an explosion in the field area. A new technology of detonation is proposed to reduce the negative impact of an explosion by reducing the limiting pressure of gaseous products of explosives on the wall of the charging cavity. Using the example of the Aramus open pit, the possibility of regulating the degree of rock crushing and reducing the negative impact of the explosion is considered.

Keywords: open pit, seismic wave, gaseous products of explosion, rock scattering.

А.В. ХАХАНОВА, В. АБДУЛЛАЕВ, В.И. ХАХАНОВ, С.В. ЧУМАЧЕНКО,
Е.И. ЛИТВИНОВА, И.В. ХАХАНОВ

ДЕДУКТИВНЫЙ АНАЛИЗ ВЕКТОРНЫХ МОДЕЛЕЙ ЛОГИЧЕСКИХ
ФУНКЦИЙ И СОЦИАЛЬНЫХ ОТНОШЕНИЙ

Предлагается модель хог–отношений между логическими функциями цифровых схем, которая сворачивается в ноль–пространство, что дает возможность решать задачи технической диагностики, генеративного машинного обучения, поиска сходства–различия между процессами и явлениями. Вводится метрика failure-driven management $T \oplus F \oplus L = 0$, которая формализует все известные процессы создания компьютеринга, включая design and test, cyberphysical и cybersocial, а также федеративный и генеративный ML–computing. Определяются достоинства векторной универсальной модели для компактного описания процессов, явлений, функций и структур. Предлагается векторно–дедуктивный метод синтеза формул для транспортирования входных списков (данных) неисправностей, которая имеет квадратичную вычислительную сложность регистровых операций. Предложены граф–логические модели, которые описывают адекватно социальные процессы и явления, включая логику управления при демократии, диктатуре и анархии.

Ключевые слова: векторная форма логики, матрица и таблица, аналитическая форма структур, дедуктивно–векторный метод анализа, цифровая схема, векторная модель дефектов и функций, логика социального управления.

Состояние вопроса. Вопросам киберуправления обществом и гражданами для достижения качества жизни и сохранения экологии планеты посвящено мало работ. Тем не менее некоторые публикации по этой теме имеются. Предложены методы дедуктивного моделирования [1], которые начинают работать с заранее определенных гипотез, чтобы прийти к логически обоснованным выводам. “Цифровая трансформация” [2] звучит безобидно, учитывая, что взрыв объемов данных, вычислительной мощности и искусственного интеллекта (ИИ) привел человечество и весь мир к точке невозврата. После автоматизации заводов и создания беспилотных автомобилей наступает очередь автоматизации общества, цифровой демократии, аспектов трансгуманизма. Человечество идет к цифровому рабству или к свободе. Киберфизические–социальные системы (CPSS) [3] обеспечивают идеальную парадигму для проектирования и построения организации киберуправления и контроля. Состояние научно–технических тен-

денций в мире, как правило, грамотно и компетентно определяется экспертами из компании Gartner. Последний прогноз этой компании показывает 12 трендов, которые ожидаются в разработке учёных и ведущих компаний планеты в 2022 году [4].

Gartner прогнозирует, что умные пространства, гомоморфное шифрование, генеративный ИИ, графические технологии и метавселенная могут разрушить и трансформировать целые рынки [5]. В [6] исследуется ИИ следующего поколения, основанный на симбиозе между людьми, машинами и природой. Термин “вычисления для человеческого опыта” (CHE) отражает роль технологий, ориентированную на человека [7]. Быстрое развитие приложений ИИ в социальных вычислениях привело к появлению области, известной как искусственный социальный интеллект (ИСИ), который может решить проблему взрыва социальных отношений [8] путем использования социально ориентированного машинного глубокого обучения.

Логика киберсоциального компьютинга. Киберфизическая система Cyber Physical System (CPS) – совокупность коммуникационно-связанных адресуемых виртуальных и реальных компонентов в оцифрованном пространстве с функциями метрического мониторинга и оптимального cloud-edge управления в реальном масштабе времени для достижения поставленных целей.

